

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ
ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԵՎ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ
սովորող ուսանողների համար

ԵՐԵՎԱՆ – 2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....3

ԲԱԺԻՆ I.

1. ԵՊՀ Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ 6
2. ՀՀ ԿԳՆ. Բուհում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգ 21

ԲԱԺԻՆ II.

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ 37

ՆԱԽԱԲԱՆ

Միբեյի՝ ուսանողներ

Հիմնադրման օրվանից ի վեր Երևանի պետական համալսարանի գործունեության ուղեգիծը եղել ու մնում է համալսարանական կրթության բովանդակության և ուսման բարձր որակի ապահովումը: Այսօր ԵՊՀ-ն համազգային և տարածաշրջանային դերակատարությամբ կրթական և գիտամշակութային ինքնավար հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, զարգացումը և փոխանցումն է: Գլոբալացման արդի ժամանակաշրջանում քաղաքակրթության մարտահրավերները պահանջում են միջազգային չափանիշներին համապատասխան մասնագիտական պատրաստվածություն՝ կրթության որակի և բովանդակության անընդհատ կատարելագործում, բարձրագույն կրթության միջազգային չափանիշներին դրանց համապատասխանեցում:

ԵՊՀ-ում 2007/08 ուստարվանից բոլոր մասնագիտությունների գծով մագիստրոսական ծրագրերը, իսկ 2008/09 ուստարվանից նաև բակալավրի ծրագրերն իրականացվում են կրեդիտային համակարգով: Ուսուցման նոր համակարգին անցնելը բխում է Բոլոնիայի գործընթացի պահանջներից և նպատակ ունի աստիճանական անցում կատարելու ուսման կազմակերպման ուսանողամետ համակարգին, որտեղ ուսման գործընթացի կենտրոնում ուսանողն է՝ իր անհատական կրթական կարիքներով, նախասիրություններով և ունակություններով, ապահովելով ուսումնառության ձևերի և անհատական կրթական հետազոծերի իրականացման լայն հնարավորություն:

Կրեդիտային համակարգի ներդրմամբ զգալիորեն բարելավվել է ձեզ առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքը և աշխատածավալը, հիմնավորված կերպով թեթևացվել լսարանային բեռնվածությունը, կրճատվել դասավանդվող առարկաների քանակը՝ իրատեսական նախադրյալներ ստեղծելով ձեր ինքնուրույն ուսումնական աշխատանքի հնարավորությունները մեծացնելու, ուսումնական ծրագրերը լավագույնս յուրացնելու և դրանցով սահմանված կրթական արդյունքները ձեռք բերելու համար:

Համալսարանում ներդրված կրեդիտային համակարգն ամբողջությամբ համատեղելի է Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգի (ECTS) հետ, ինչը նորաստեղծ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ձեր ակադեմիական շարժունության (ուսանողական փոխանակումներ, ուսումնառության ժամանակահատվածներ օտարերկրյա բուհերում, կրթության շարունակում ավելի բարձր աստիճանում և այլն) ընդլայնման և որակավորումների ճանաչման դյուրացման գրավականն է: Իսկ դա կընդլայնի ձեր ապագա կարիերայի և մասնագիտական աշխատուժի գլոբալ շուկայում աշխատանք գտնելու հնարավորությունները:

Կրեդիտային համակարգի ներդրումը համալսարանում մեկնարկած լայնամասշտաբ կրթական բարեփոխումների սկիզբն է միայն, բարեփոխումներ, որոնք պայմանավորված են ոչ միայն Բոլոնիայի գործընթացի պահանջների ձևական կատարմամբ, այլև համալսարանում ծրագրային բարձր չափորոշիչների պահպանման և ուսման որակի բարձրացման նպատակադրությամբ, ինչի հիմնական չափանիշը մեր շրջանավարտների մասնագիտական աշխատանքով ապահովվածությունն է: Համալսարանը տարեցտարի խորացնելու և ընդլայնելու է կրեդիտային համակարգի գործառույթները՝ ձեռք համար կրթական ընտրության առավել ընդլայնված հնարավորություններ ապահովելու նպատակով:

Կրեդիտային համակարգով ուսումնառության ներկա ուղեցույցը պարունակում է ձեռք համար օգտակար տեղեկատվություն կրեդիտային համակարգի հիմնադրույթների, ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտելիքների ստուգման ու գնահատման նոր կարգի, ձեռք առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքի, բովանդակության և աշխատաձևավալների, ծրագրի բաղկացուցիչ դասընթացների և դրանցով նախանշված կրթական արդյունքների վերաբերյալ:

Հաջողություն և ամենայն բարիք եմ մաղթում ձեզ:

ՌԵԿՏՈՐ՝  Ա. ՄԻՍՈՆՅԱՆ

I ԲԱԺԻՆ

1. ԵՊՀ ԲԱԿԱԼԱՎՐԻ և ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ

2. ՀՀ ԿԳՆ. ԲՈՒՀՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ
ԿՐԵԴԻՏԱՑԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2017 թ. մայիսի 4-ի թիվ 7 նիստում

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՐՆԹԱՑԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	8
2. ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՇԽԱՏԱԾԱՎԱԼԸ	8
3. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ	9
3.1. Համակարգի հիմնադրույթները	9
3.2. Դասընթացների գնահատումը	9
3.3. Գնահատման գործընթացի կազմակերպումը	11
3.4. Գնահատման սանդղակը	11
3.5. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը	12
4. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՐԿՆՈՒՄԸ.....	13
5. ՈՒՍԱՆՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՔԱՐՏԸ	14
6. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔԸ.....	15
7. ԱՌՑԱՆՑ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.....	16
8. ՊՐԱԿՏԻԿԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ	16
9. ԿՈՒՐՍԱՑԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ.....	17
10. ԿԱՍԸՆՏՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ	18
11. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐԸ.....	18
12. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆ (ԿՈՒՐՍՈՐԸ).....	18
13. ՈՒՍԱՆՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	19

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը (այսուհետև՝ կարգ) սահմանում է Երևանի պետական համալսարանում (այսուհետև՝ ԵՊՀ) առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնները:
- 1.2. Կարգը ներառում է ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ակադեմիական առաջադիմության չափանիշները և այլն:
- 1.3. Կարգը մշակվել է «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներին, ԵՊՀ կանոնադրությանը համապատասխան:

2. Ուսանողի ուսումնական բեռնվածությունը և կրթական ծրագրերի աշխատածավալը

- 2.1. ԵՊՀ-ում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը առկա ուսուցման համար սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի, իսկ հեռակա ուսուցման համար՝ 1440 ժամ, որը համարժեք է 48 ECTS կրեդիտի: 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը: Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի:
- 2.2. Բակալավրի կրթական ծրագրի լրիվ աշխատածավալը 240 կրեդիտ է, իսկ մագիստրոսի կրթական ծրագրինը՝ 120 կրեդիտ:
- 2.3. Առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի տևողությունը 4 տարի է (8 կիսամյակ), իսկ մագիստրոսի կրթական ծրագրինը՝ 2 տարի (4 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 20-շաբաթյա տևողություն, որը բաշխվում է հետևյալ հերթականությամբ. 8 շաբաթ լսարանային պարապմունքներ, 1 շաբաթ ընթացիկ քննություններ, 7 շաբաթ լսարանային պարապմունքներ, 1 շաբաթ ընթացիկ քննություններ ու ստուգաքննություններ և 3 շաբաթ եզրափակիչ քննություններ:
- 2.4. Հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի տևողությունը 5 տարի է (10 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողություն, որը բաշխվում է հետևյալ հերթականությամբ. 4 շաբաթ լսարանային պարապմունքներ¹, 1 շաբաթ ինքնուրույն աշխատանք, 2 շաբաթ ընթացիկ քննություններ, 3 շաբաթ ինքնուրույն աշխատանք, 2 շաբաթ ընթացիկ քննություններ և 4 շաբաթ եզրափակիչ քննություններ:
- 2.5. Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրի տևողությունը 2,5 տարի է (5 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողություն, որը բաշխվում է հետևյալ հերթականությամբ. 3 շաբաթ լսարանային պարապմունքներ, 2 շաբաթ ինքնուրույն աշխատանք, 2 շաբաթ ընթացիկ քննություններ, 3 շաբաթ ինքնուրույն աշխատանք, 2 շաբաթ ընթացիկ քննություններ և 4 շաբաթ եզրափակիչ քննություններ:
- 2.6. Մանկավարժի որակավորում ստանալու համար համապատասխան մասնագիտությունների ուսանողները լրացուցիչ պետք է կուտակեն 30 կրեդիտ՝ համաձայն «Երևանի պետական համալսարանի բակալավրիատի շրջանավարտներին մանկավարժի որակավորում շնորհելու կարգ»-ի:
- 2.7. Բակալավրի կրթական ծրագրի յուրաքանչյուր կիսամյակային քննաշրջանում նախատեսվում է առավելագույնը 5 քննություն, բացառությամբ առաջին կիսամյակի, որտեղ քննությունների թիվը չի գերազանցում 3-ը: Մագիստրոսի կրթական ծրագրում այդ քննությունների թիվը սահմանվում է ըստ օրինակելի ուսումնական պլանի:

¹ Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ և ռեկտորի թույլտվությամբ լսարանային պարապմունքները, տրված ժամաքանակների սահմաններում (լեզվական մասնագիտությունների գծով՝ նաև ժամաքանակի ավելացմամբ), կարող են իրականացվել նաև այլ գրաֆիկով:

2.8. Ավարտական աշխատանքը և մագիստրոսական թեզը գնահատվում են 20 միավորանոց սանդղակով՝ համաձայն ԵՊՀ-ում ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգերի:

3. Գիտելիքների ստուգումը և գնահատումը

3.1. Համակարգի հիմնադրույթները

3.1.1. ԵՊՀ-ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

- ա) կազմակերպել ուսումնառության համաչափ գործընթաց և խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- բ) ներմուծել հետադարձ կապի մեխանիզմներ՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից որպես դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման միջոց օգտագործելու համար:

3.1.2. Գնահատումը ներառում է հետևյալ բաղադրամասերը.

- ա) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ),
- բ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում, որը ենթադրում է դասընթացի կամ կրթական մոդուլի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատում,
- գ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

3.1.3. Ելնելով կրթական ծրագրի ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորության աստիճանը ուսանողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեջ՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 4 խմբի՝

- ա) *եզրափակիչ գնահատումով,*
- բ) *առանց եզրափակիչ գնահատման,*
- գ) *առանց ընթացիկ գնահատման,*
- դ) *ստուգարքային:*

3.2. Դասընթացների գնահատումը

3.2.1. *Եզրափակիչ գնահատումով դասընթացի* դեպքում, քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննությունից բացի, նախատեսվում է 2 ընթացիկ քննություն:

Ընթացիկ և եզրափակիչ քննություններն անցկացվում են գրավոր կամ բանավոր՝ ելնելով դասընթացի դասավանդման և ուսումնառության ձևերից, ինչպես նաև ակնկալվող կրթական վերջնարդյունքների բնույթից: Քննությունների անցկացման ձևը (գրավոր կամ բանավոր) նշվում է կրթական ծրագրի մասնագրում:

3.2.2. *Եզրափակիչ գնահատումով դասընթացից* (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը /միավորը (Գ_{արդ.}) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

- ա) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ քննությունների արդյունքներից (ΣԶ_{ընթ.}), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 5 միավոր,

բ) եզրափակիչ քննության արդյունքից (Ք_{եզր.}), որը կարող է գնահատվել առավելագույնը 10 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման՝ առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար.

$$G_{արդ.} = \sum P_{ընթ.} + P_{եզր.}:$$

Ըստ այդմ՝ *եզրափակիչ գնահատումով դասընթացի* գնահատումն իրականացվում է համաձայն *Աղյուսակ 1*-ի, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով²).

Աղյուսակ 1.

Գնահատման բաղադրամասը	Ք _{ընթ.1}	Ք _{ընթ.2}	Ք _{եզր.}	G _{արդ.}
Առավելագույն միավորը	5	5	10	20

3.2.3. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացը* գնահատվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ քննությունների արդյունքներով:

3.2.4. *Առանց եզրափակիչ գնահատման դասընթացից* (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը (G_{արդ.}) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ քննությունների արդյունքներից (ΣՔ_{ընթ.}), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 10 միավոր,

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման՝ առանձին ընթացիկ քննություններից վաստակած միավորների գումար.

$$G_{արդ.} = \sum P_{ընթ.}:$$

Ըստ այդմ՝ *առանց եզրափակիչ գնահատման դասընթացի* գնահատումն իրականացվում է համաձայն *Աղյուսակ 2*-ի, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով³).

Աղյուսակ 2.

Գնահատման բաղադրամասը	Ք _{ընթ.1}	Ք _{ընթ.2}	G _{արդ.}
Առավելագույն միավորը	10	10	20

Վերոնշյալը (Աղյուսակ 1 և Աղյուսակ 2) կիրառվում է նաև հեռակա ուսուցման համար:

3.2.5. Լաբորատոր աշխատանքի ձև ունեցող դասընթացի ընթացիկ քննությանը ուսանողի մասնակցությունը թույլատրվում է նախորդող ժամանակահատվածում նախատեսված լաբորատոր աշխատանքների առնվազն 60 % կատարողականի (փորձերի կատարում և հանձնում) դեպքում: Հակառակ դեպքում ուսանողին չի թույլատրվում մասնակցել ընթացիկ քննությանը, իսկ քննական տեղեկագրում նշանակվում է «0» միավոր:

3.2.6. Դասընթացը կարող է լինել *եզրափակիչ գնահատումով* միայն այն դեպքում, եթե կիսամյակում ունի առնվազն 60 ժամ լսարանային բեռնվածություն:

3.2.7. *Առանց ընթացիկ գնահատման* (միայն եզրափակիչ քննությամբ) և *առանց եզրափակիչ գնահատման* կարող են լինել հիմնականում փոքրածավալ մասնագիտական դասընթաց-

² Ընթացիկ քննության մեկ առաջադրանքի արժեքը առնվազն 1 միավոր է, իսկ գնահատման քայլը՝ 0,5: Առաջադրանքների գնահատականները գումարվում են, և վերջնական արդյունքը ներկայացվում է ամբողջ թվով:

³ Տե՛ս սույն կարգի 3.2.2. կետը:

ները:

- 3.2.8. *Ստուգարքային* կարող են լինել բակալավրիատի ընդհանուր կրթական կառուցամասի դասընթացները, մագիստրատուրայի ընդհանուր դասընթացները, ինչպես նաև մագիստրատուրայի «Մասնագիտության արդի հիմնախնդիրները» մասնագիտական դասընթացը:

3.3. Գնահատման գործընթացի կազմակերպումը

- 3.3.1. Կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում դասախոսը ուսանողներին տեղեկացնում է գիտելիքների ստուգման ձևերի, հարցաշարերի և ժամկետների, ինչպես նաև գնահատման մեթոդների ու չափանիշների մասին:
- 3.3.2. Ֆակուլտետները կազմում են քննաշրջանների ժամանակացույցները, որոնք հաստատում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը: Հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնամեթոդական վարչություն, իսկ ուսանողներին տեղեկացվում է նրանց համալսարանական էլեկտրոնային փոստի միջոցով:
- 3.3.3. Ընթացիկ քննություններն անցկացվում են՝ առկա ուսուցման դեպքում՝ ուսումնառության կիսամյակի 9-րդ և 17-րդ շաբաթներում, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 6÷7-րդ և 11÷12-րդ շաբաթներում (այդ շաբաթներում դասեր չեն նախատեսվում):
- 3.3.4. Եզրափակիչ քննությունները առկա ուսուցման դեպքում անցկացվում են կիսամյակային քննաշրջաններում՝ 18÷20-րդ շաբաթներում, իսկ հեռակա ուսուցման դեպքում՝ 13÷16-րդ շաբաթներում:
- 3.3.5. Բանավոր քննության և ստուգարքի ավարտից հետո դասախոսը տեղեկագիրը սքանավորման համար նույն օրը ներկայացնում է դեկանատ, իսկ գրավոր քննության տեղեկագիրը դասախոսը սքանավորման համար դեկանատ է ներկայացնում տվյալ քննության ավարտին հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում:
- 3.3.6. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ու ստուգարքների գնահատականը հրապարակելու օրը ուսանողն իրավունք ունի այն բողոքարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը գրավոր դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, անհրաժեշտության դեպքում նաև ֆակուլտետի դեկանին:
- 3.3.7. Գրավոր քննությունները գրառվում են ուսանողներին տրամադրված սահմանված նմուշի տեսքերում: Ուսանողը և դասախոսը պետք է պահպանեն քննական տեսքում ներկայացված պահանջները:
- 3.3.8. Ստուգարքի/եզրափակիչ քննության տեղեկագրում ուսանողի անվան դիմաց յուրաքանչյուր նշում կատարվում է միայն ուսանողի ներկայությամբ (բացառությամբ «Չն»-ի): Եզրափակիչ գնահատումով դասընթաց(ներ)ի ընթացիկ քննությունները հանձնելուց հետո, եթե ուսանողի արդյունաբար միավորը 8 կամ բարձր է, ապա ուսանողն իրավունք ունի տվյալ դասընթացի եզրափակիչ քննությանը, հետևաբար նաև լուծարքային շրջանին չներկայանալ, և այդ դեպքում տեղեկագրի համապատասխան սյունակներում կատարվում է «Չն» նշումը, և պահպանվում է ուսանողի 8 կամ բարձր միավորը: Ստուգարքին/քննությանը չներկայանալու դեպքում կատարվում է «Չն» նշումը:
- 3.3.9. Քննաշրջանը կամ առանձին ստուգարքներ/քննություններ ուսանողը համապատասխան հիմնավորմամբ ժամկետից շուտ կարող է հանձնել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի թույլտվությամբ:
- 3.3.10. Ընթացիկ քննությունները, ստուգարքները և եզրափակիչ քննությունները հեռավար ձևով կազմակերպելը թույլատրվում է միայն ռեկտորի հրամանով:

3.4. Գնահատման սանդղակը

3.4.1. ԵՊՀ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է 20 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 3.

Գնահատման արդյունարար միավորը	Գնահատականը
18-20	«Գերազանց»
13-17	«Լավ»
8-12	«Բավարար»
0-7	«Անբավարար»

3.5. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

3.5.1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում գրանցելու նպատակով յուրաքանչյուր ուսանողի համար լրացվում է *ակադեմիական տեղեկագիրը*, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

3.5.2. Ուսանողի վաստակած կրեդիտները նրա ուսումնառության ողջ շրջանում գրանցվում և կուտակվում են ակադեմիական տեղեկագրում:

3.5.3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածը ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

- *գումարային կրեդիտներ,*
- *գնահատված կրեդիտներ,*
- *վարկանիշային միավորներ,*
- *միջին որակական գնահատական:*

3.5.4. *Գումարային կրեդիտը (Կ)* կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

3.5.5. *Գնահատված կրեդիտը (ԳԿ)* գումարային կրեդիտի այն մասն է, որը գնահատված է թվային միավորներով.

$$ԳԿ = \sum Կրեդիտ_i :$$

3.5.6. *Վարկանիշային միավորը (ՎՄ)* թվային միավորներով գնահատված դասընթացների (մոդուլների) կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումարն է.

$$ՎՄ = \sum Կրեդիտ_i \times Գ_{արդ,i} ,$$

որտեղ $Գ_{արդ,i}$ -ը տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է:

Օրինակ, եթե ուսանողը 5, 4 և 6 կրեդիտանոց դասընթացներից ստացել է համապատասխանաբար 12, 16 և 19 միավոր, ապա դասընթացների այդ խմբից ուսանողի վարկանիշային միավորն է՝
 $\nu U = 5 \times 12 + 4 \times 16 + 6 \times 19 = 238$ ՝ 300 հնարավորից ($5 \times 20 + 4 \times 20 + 6 \times 20$):

3.5.7. Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ)։

$$\text{ՄՈԳ} = \frac{\nu U}{\text{ԳԿ}}$$

Օրինակ, նախորդ դեպքում դիտարկված դասընթացների խմբի համար հաշվարկված միջին որակական գնահատականը կլինի՝ $\text{ՄՈԳ} = \frac{238}{15} = 15,87$ ՝ 20 հնարավորից։

3.5.8. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունաբար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը։

4. Քննությունների վերահանձնումը և դասընթացի կրկնումը

- 4.1. Քննաշրջանի արդյունքներով դրական (8 և բարձր) միավոր ստացած ուսանողին տվյալ դասընթացը վերահանձնել չի թույլատրվում։
- 4.2. Եզրափակիչ գնահատումով դասընթացի դեպքում ընթացիկ քննություններից որևէ մեկին չներկայացած ուսանողին չի թույլատրվում այն վերահանձնել։
(4.2 կետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 06.07.2017թ. թիվ 8/4 որոշմամբ)։
- 4.3. Առանց եզրափակիչ գնահատման դասընթացի դեպքում ընթացիկ քննություններից որևէ մեկին չներկայացած ուսանողը կարող է այն հանձնել լուծարքային շրջանում։
(4.3 կետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 06.07.2017թ. թիվ 8/4 որոշմամբ)։
- 4.4. Առանց ընթացիկ գնահատման դասընթացի քննությանը կամ ստուգարքային դասընթացի ստուգարքին չներկայացած ուսանողը կարող է այն հանձնել լուծարքային շրջանում։
(4.4 կետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 06.07.2017թ. թիվ 8/4 որոշմամբ)։
- 4.5. Ակադեմիական պարտքերի մարման կարգը սահմանվում է ԵՊՀ ռեկտորատի կողմից, և այդ ընթացքում ստուգարքների և/կամ քննությունների վերահանձնումը կազմակերպվում է միայն քննական հանձնաժողովներով, որոնք ձևավորվում են ռեկտորի հրամանով։
- 4.6. Եզրափակիչ գնահատումով դասընթացի գնահատման արդյունաբար դրական նվազագույն միավորի՝ 8-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում պետք է վերահանձնի եզրափակիչ քննությունը՝ վերջինիս համար սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ։

Օրինակ, եթե ուսանողը դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից վաստակել է համապատասխանաբար 1 և 3 միավոր, իսկ եզրափակիչ քննությունից՝ 3 միավոր, ապա այդ դասընթացի արդյունաբար գնահատականը կլինի՝ $\text{Գ}_{արդ.} = 1 + 3 + 3 = 7$, որը ցածր է նվազագույն (8 միավոր) շեմային պահանջից։ Այս դեպքում պահպանվում են միայն ընթացիկներից ստացած միավորները, այսինքն՝ 4, և պարտքերի մարման շրջանում ուսանողը վերահանձնում է միայն եզրափակիչ քննությունը՝ սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ։ Եթե ուսանողը պարտքերի մարման շրջանում չի հաղթահարում նվազագույն 8 միավորի շեմը, ապա տեղեկագրում նրա անվան դիմաց նշվում է նախորդ անբավարար միավորը, տվյալ օրինակի դեպքում՝ 7։

4.7. Առանց եզրափակիչ գնահատման դասընթացի գնահատման արդյունարար դրական նվազագույն միավորի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում ընթացիկ քննությունները պետք է վերահանձնի առանձին-առանձին (իր ցանկությամբ՝ մեկը կամ երկուսը) և կարող է վաստակել 8 և ավելի միավոր:

Օրինակ, եթե ուսանողը դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից վաստակել է համապատասխանաբար 2 և 3 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար միավորը կլինի՝ $Q_{արդ.} = 2 + 3 = 5$, որը ցածր է նվազագույն (8 միավոր) շեմային պահանջից: Վերահանձնելով ընթացիկ քննություն(ներ)ը՝ ուսանողը կարող է վաստակել դրական նվազագույն 8 միավոր և ավելի: Եթե ուսանողը պարտքերի մարման շրջանում չի հաղթահարում դրական նվազագույն 8 միավորի շեմը, բայց բարձրացնում է գնահատականը, ապա տեղեկագրում նրա անվան դիմաց նշվում է նոր միավորը:

4.8. Առանց ընթացիկ գնահատման դասընթացի գնահատման արդյունարար դրական նվազագույն միավորի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում պետք է վերահանձնի ամբողջ դասընթացը և կարող է վաստակել 8 և ավելի միավոր:

4.9. Գնահատման վերոնշյալ կանոնները վերաբերում են նաև հեռակա ուսուցման համակարգին:

4.10. Բակլավրի կրթական ծրագրում ակադեմիական պարտքերի մարման շրջանից հետո, եթե առաջացած առարկայական պարտքերի կրեդիտների գումարը չի գերազանցում 12-ը, ապա համաձայն սահմանված կարգի՝ ուսանողը (բացառությամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ընդունվածների) կարող է առարկայական պարտքերը մարել մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը՝ վերահանձնելով առարկաները ևս 2 անգամ կամ կրկնելով այդ առարկաների դասընթացները:

4.11. Ակադեմիական պարտքերի մարման շրջանից հետո մագիստրոսի կրթական ծրագրում թույլատրվում է հանձնել մինչև 12 կրեդիտ առարկայական պարտք(եր)ը, եթե դասընթացի գնահատման արդյունարար միավորը 5-7 տիրություն է, իսկ 4 և ցածր արդյունարար միավորի դեպքում ուսանողը հեռացվում է համալսարանից:

4.12. Քննաշրջանից և պարտքերի մարման յուրաքանչյուր շրջանից հետո ակադեմիական անբավարար առաջադիմություն ունեցող ուսանողների՝ համալսարանից հեռացման վերաբերյալ որոշումը կայացվում է ըստ ԵՊՀ ռեկտորատի սահմանած չափանիշների:

4.13. Մագիստրոսի կրթական ծրագրում մագիստրոսական թեզի պատրաստման կատարողականը ատեստավորվում է համապատասխան ուսումնական ստորաբաժանման կողմից՝ համաձայն ԵՊՀ-ում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգի պահանջների:

4.14. Մագիստրոսական թեզի ատեստավորումը չանցած ուսանողը հեռացվում է համալսարանից ակադեմիական անբավարար առաջադիմության պատճառով: Հեռացված ուսանողը վերականգնումից հետո շարունակում է կատարել նախկինում հաստատված թեմայով մագիստրոսական թեզը:

5. Ուսանողի անձնական գործը և ուսումնական քարտը

5.1. Ուսանողի անձնական գործը նրա ողջ ուսումնառության ընթացքում դեկանատում պահվող հիմնական փաստաթղթերից է:

5.2. Բակլավրիատի ուսանողի անձնական գործի համար հիմք են ծառայում դիմորդի կողմից ընդունող հանձնաժողովին հանձնված փաստաթղթերը՝ կրթության վկայականը (բնօրինակ), ընդունելության դիմում-հայտը, 3x4 չափսի լուսանկարները, կենտրոնացված և ներբուհական քննությունների դեպքում՝ համապատասխան հիմքերը, ընդհանուր մրցույթից դուրս ընդունվածների համապատասխան փաստաթղթերը: Բացի այդ, ուսանողի անձնական գործում

դեկանատը պետք է ներառի.

- համալսարանի և ուսանողի միջև կնքված պայմանագիրը, որը պետք է համարակալվի ստուգման գրքույկի համարով,
- վճարովի համակարգում սովորող ուսանողի բոլոր կիսամյակների ուսման վարձի վճարման կտրոնները,
- ուսանողին վերաբերող դիմումները, գրությունները և համալսարանական ու ֆակուլտետային բոլոր հրամանները,
- ընդունելության միասնական քննությունների արդյունքների մասին վկայականը, որը համալսարան ընդունված դիմորդը ներկայացնում է սեպտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում:

5.3. Մագիստրատուրայի ուսանողի անձնական գործի համար հիմք են ծառայում դիմորդի կողմից ընդունող հանձնաժողովին հանձնված փաստաթղթերը՝ բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմի և դրա հավելվածի պատճենները, ընդունելության դիմում-հայտը, 3x4 չափսի լուսանկարները: Նշվածներից բացի՝ ուսանողի անձնական գործում դեկանատը պետք է ներառի.

- համալսարանի և ուսանողի միջև կնքված պայմանագիրը, որը պետք է համարակալվի ստուգման գրքույկի համարով,
- վճարովի համակարգում սովորող ուսանողի բոլոր կիսամյակների ուսման վարձի վճարման կտրոնները,
- ուսանողին վերաբերող դիմումները, գրությունները և համալսարանական ու ֆակուլտետային բոլոր հրամանները:

5.4. Համալսարանն ավարտվելուց հետո ուսանողի անձնական գործն ամբողջությամբ՝ ներառյալ ստուգման գրքույկը, շրջանցիկ թերթիկը, դիպլոմի և դրա հավելվածի պատճենները և ավարտման հրամանը, հանձնվում է ԵՊՀ արխիվ:

5.5. Ուսանողի հետ պայմանագիրը կնքելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, ուսումնական էլեկտրոնային քարտում ֆակուլտետի դեկանատի կողմից մուտքագրվում են ուսանողի անձնական տվյալները, նրան վերաբերող բոլոր հրամանները, և տեղադրվում է նրա լուսանկարը: Ուսանողի քննաշրջանի արդյունքները քննաշրջանից հետո ուղարկվում են ուսանողի համալսարանական էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Դասընթացների տեղեկագիրքը

6.1. Համալսարանը յուրաքանչյուր ուստարվա համար հրապարակում է *ԵՊՀ դասընթացների տեղեկագիրք*, որը տեղադրվում է համալսարանի կայքէջում:

6.2. *Դասընթացների տեղեկագիրքը* նախատեսված է համալսարանում իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է.

ա) առաջարկվող կրթական ծրագրերը, ուսումնական գործընթացի ժամանակացույցը և «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»-ը,

բ) տեղեկություն կրթական ծրագրերի վերաբերյալ.

- ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, մուտքի շեմային պահանջները, ծրագրի նպատակները և նախանշված կրթական վերջնարդյունքները, կրթությունը շարունակելու հնարավորությունները, ծրագրի ընդհանուր կառուցվածքը և բովանդակությունը, քննական կանոնները և գնահատման կարգը, ամփոփիչ ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,

– առանձին դասընթացի նկարագրությունը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի նպատակը և կրթական վերջնարդյունքները՝ արտահայտված կրթական մասնագիտական և ընդհանրական գիտելիքներով, կարողություններով և հմտություններով, դասընթացի համառոտագիրը (հակիրճ բովանդակությունը/թեմաները), դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

7. Առցանց դասընթացի կազմակերպումը

- 7.1. ԵՊՀ կրթական ծրագրերում առանձին դասընթացներ ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ և ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի արտոնությամբ կարող են կազմակերպվել առցանց եղանակով:
- 7.2. Առցանց և լսարանային եղանակներով իրականացվող դասընթացների բովանդակությունը, ինչպես նաև կրթական վերջնարդյունքները պետք է լինեն նույնը:
- 7.3. Առցանց եղանակով նախատեսվող դասընթացի նյութը պատրաստում է իրականացնող ամբիոնը և ներկայացնում ֆակուլտետի մեթոդական խորհրդին՝ երաշխավորություն ստանալու համար:
- 7.4. Առցանց ուսուցման էլեկտրոնային միջավայրի տեխնիկական ապահովումը և վերահսկողությունն իրականացնում են ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական (այսուհետև՝ ՏՏԿՀ) կենտրոնը և տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչությունը:
- 7.5. Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում առցանց դասընթացներ իրականացնող ամբիոնը ՏՏԿՀ կենտրոնին ներկայացնում է դրանց անվանումները, դասախոսներին և ընդգրկված ուսանողներին, որի հիման վրա ՏՏԿՀ կենտրոնն ապահովում է առցանց միջավայր:
- 7.6. Առցանց դասընթացը վարող դասախոսը վերահսկում է ուսանողների մասնակցությունը, տրամադրում և շարունակաբար թարմացնում է էլեկտրոնային ուսումնական նյութերը, առցանց կապի մեջ է լինում ուսանողների հետ, կազմակերպում է քննարկումներ և սեմինարներ:
- 7.7. Ուսանողները ստանում են տեխնիկական աջակցություն էլեկտրոնային փոստով կամ էլեկտրոնային կապի այլ միջոցներով:

8. Պրակտիկայի կազմակերպումը

- 8.1. Պրակտիկական ուսանողի մասնագիտական կրթության կարևոր և անբաժանելի բաղադրիչներից է, որը նպատակաուղղված է ուսումնառության ընթացքում ստացած գիտելիքների գործնական կիրառության հմտությունների զարգացմանը:
- 8.2. Բակալավրի կրթական ծրագրով սովորող ուսանողները, մասնագիտությամբ պայմանավորված, կարող են անցնել հետևյալ պրակտիկաներից մի քանիսը՝ ուսումնական (ճանաչողական, դաշտային, էքսկուրսիոն, թանգարանային և այլն) և մասնագիտական (արտադրական, գիտահետազոտական, փորձարարական, մանկավարժական), իսկ մագիստրոսի կրթական ծրագրում ընդգրկված ուսանողները՝ միայն մասնագիտական պրակտիկա:

- 8.3. Ուսումնական պրակտիկան կազմակերպվում է բակալավրիատի 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողների համար, որի նպատակն է ամրապնդել և խորացնել ուսանողի ընդհանուր մասնագիտական գիտելիքները:
- 8.4. Մասնագիտական պրակտիկայի նպատակն է զարգացնել ուսանողների նեղ մասնագիտական հմտությունները:
- 8.5. Պրակտիկայի տեսակը, տևողությունը և ժամկետները սահմանվում են համապատասխան կրթական ծրագրով:
- 8.6. Պրակտիկան կազմակերպվում և վերահսկվում է ուսումնամեթոդական վարչության կողմից՝ պրակտիկայի ծրագրի և ժամանակացույցի համաձայն, համապատասխան մասնագիտական կրթական ծրագիրն իրականացնող ֆակուլտետի (ինստիտուտի, կենտրոնի) պրակտիկայի պատասխանատու(ներ)ի հետ համատեղ:
- 8.7. Պրակտիկայի ամբողջ ընթացքն արձանագրվում է ուսանողի օրագրում: Պրակտիկայի ավարտին այն իրականացնող հաստատության պատասխանատու անձը օրագրում ներկայացնում է կարծիք և բնութագիր: Օրագիրը կցվում է ուսանողի անձնական գործին:
- 8.8. Մասնագիտությամբ աշխատող ուսանողը ազատվում է մասնագիտական պրակտիկայից՝ աշխատանքի վայրից ներկայացնելով համապատասխան տեղեկանք:
- 8.9. Պրակտիկան գնահատվում է ստուգաբքի ձևով: Պրակտիկայի ղեկավարը «Ստուգված» նշում է այն դեպքում, եթե ուսանողը մասնակցել է պրակտիկային և կատարել է առաջադրանքները:

9. Կուրսային աշխատանքի պատրաստումը և գնահատումը

- 9.1. Կուրսային աշխատանքը նպատակաուղղված է դասընթացի կամ դասընթացների խմբի ուսումնասիրության արդյունքում ուսանողի ստացած գիտելիքների կիրառության հմտությունների ձևավորմանը և զարգացմանը:
- 9.2. Կուրսային աշխատանքի թեման և ղեկավարին հաստատում է ամբիոնը կիսամյակի առաջին երկու շաբաթվա ընթացքում և տեղեկացնում ուսանողներին:
- 9.3. Թեմայի հաստատումից հետո մեկշաբաթյա ժամկետում կուրսային աշխատանքի ղեկավարը ուսանողի հետ կազմում է առաջադրանքը և նրան տրամադրում համապատասխան գրականության ցանկը:
- 9.4. Կուրսային աշխատանքի ղեկավարը կանոնավոր խորհրդատվությունների ժամանակացույցը ներկայացնում է ամբիոն և տեղեկացնում ուսանողներին:
- 9.5. Ուսանողը ավարտած կուրսային աշխատանքը (տպագիր և էլեկտրոնային) ամբիոն է ներկայացնում պաշտպանությունից առնվազն 7 օր առաջ:
- 9.6. Կուրսային աշխատանքի պաշտպանությունն իրականացվում է առնվազն երկու դասախոսից (որոնցից մեկը կուրսային աշխատանքի ղեկավարն է) կազմված հանձնաժողովում:
- 9.7. Պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է անբավարար:
- 9.8. Գնահատականի վերաբերյալ անհամաձայնության դեպքում ուսանողը նույն օրը գրավոր դիմում է ամբիոնի վարիչին:

10. Կամրնտրական դասընթացների ընտրության ընթացակարգը

- 10.1. Բակալավրի կրթական ծրագրի կամրնտրական դասընթացներ են նախատեսվում *ընդհանուր կրթական և մասնագիտական* կառուցամասերում:
- 10.2. Ընդհանուր կրթական կառուցամասի կամրնտրական դասընթացների ցանկից ուսանողն ընտրում է երեքը:
- 10.3. Մագիստրոսի կրթական ծրագրի կամրնտրական դասընթացները նախատեսվում են մասնագիտացման դասընթացների կրթամասում, որոնցից ուսանողն ընտրում է հինգը:
- 10.4. Կամրնտրական դասընթացներին ուսանողները գրանցվում են ֆակուլտետում, և արդյունքները սահմանված ժամկետում ներկայացվում են ուսումնամեթոդական վարչություն:
- 10.5. Կամրնտրական դասընթացներին ուսանողների գրանցումը կատարվում է նախորդող ուստարում՝ մինչև ապրիլի 1-ը: Սահմանված վերջնաժամկետից հետո գրանցումներ չեն կատարվում:
- 10.6. Համալսարանը կարող է չեղարկել ցանկացած կամրնտրական դասընթացի իրականացումը, եթե դրանում ընդգրկված չեն բավարար թվով ուսանողներ՝ ըստ սահմանված նորմերի:

11. Կրթական ծրագրի ղեկավարը

- 11.1. Կրթական ծրագրի պատշաճ մշակման, իրականացման, մշտադիտարկման և վերանայման նպատակով նախատեսված են կրթական ծրագրի ղեկավարի գործառույթներ:
- 11.2. Կրթական ծրագրի ղեկավարը կազմում է նոր կրթական ծրագրի մշակման հայտ, որով հիմնավորում է ծրագրի ներդրման և հետագա իրականացման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը:
- 11.3. Կրթական ծրագրի ղեկավարը ծրագիրը մշակող աշխատանքային խմբի հետ ձևակերպում է ծրագրի նպատակներն ու վերջնարդյունքները՝ որակավորումների ազգային շրջանակի և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:
- 11.4. Կրթական ծրագրի ղեկավարը կազմակերպում է ծրագրի փաստաթղթային փաթեթի մշակման գործընթացը, որին մասնակից է դարձնում նաև գործատուներին և արտաքին այլ շահակիցների:
- 11.5. Կրթական ծրագրի ղեկավարը ապահովում է ծրագրի հրապարակայնությունն ու մասնագիտական կողմնորոշման աշխատանքները:
- 11.6. Կրթական ծրագրի ղեկավարը ֆակուլտետի (ինստիտուտի, կենտրոնի) ղեկավարության հետ միասին կրթական ծրագիրը նախապատրաստում է հավատարմագրման:
- 11.7. Կրթական ծրագրի ղեկավարը չի կարող ղեկավարել նույն կրթական մակարդակի մեկից ավելի կրթական ծրագրեր:

12. Ուսումնական խորհրդատուն (կուրատորը)

- 12.1. Առաջին կուրսի ուսանողներին ուսումնառության ընթացքում օժանդակելու նպատակով նշանակվում են ուսումնական խորհրդատուներ, որոնք ֆակուլտետի փորձառու դասախոսներ են:
- 12.2. Ուսումնական խորհրդատուների թիվը սահմանում է ֆակուլտետը՝ 30 ուսանողի համար նախատեսելով մեկ խորհրդատու:

- 12.3. Ուսումնական խորհրդատուն ուսանողների ծանոթացնում է իրենց իրավունքներին և պարտականություններին, համալսարանում գործող և առաջին հերթին ուսանողներին առնչվող կանոնակարգերին և կարգերին (ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման, ԵՊՀ ներքին կարգապահական, ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման և այլն), ուսանողի ուղեցույցին, գրադարանից օգտվելու կանոններին և այլն:
- 12.4. Ուսումնական խորհրդատուն ծանոթանում է ուսանողների սոցիալ-կենցաղային պայմաններին, վերահսկում նրանց ուսումնական առաջընթացը, օգնում նրանց՝ հաղթահարելու ուսման ընթացքում ծագած դժվարությունները, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար կազմակերպում խորհրդատվություններ:
- 12.5. Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին ֆակուլտետի գիտական խորհուրդը լսում և գնահատում է ուսումնական խորհրդատուների հաշվետվությունները:

13. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

13.1. Ուսանողն իրավունք ունի՝

- սահմանված կարգով ցանկացած կրթական մակարդակում ընդհատելու կամ շարունակելու մասնագիտական կրթությունը,
- սահմանված կարգով վերականգնելու ընդհատած ուսանողական իրավունքները ԵՊՀ-ում,
- մասնակցելու ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը,
- բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից՝ յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց (արտածրագրային), որը դասավանդվում է ԵՊՀ-ում՝ ըստ սահմանված կարգի,
- հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական (զուգահեռ) ուսուցման հետ և ստանալու երկրորդ որակավորման աստիճան,
- օգտվելու ԵՊՀ գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական, մարզական, առողջարանային, ուսումնաարտադրական և այլ ստորաբաժանումների ծառայություններից,
- ըստ նախասիրությունների՝ մասնակցելու ԵՊՀ-ում անցկացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին,
- լիազորված մարմնի սահմանած կարգով, անհրաժեշտության դեպքում, ստանալու ակադեմիական արձակուրդ՝ մինչև մեկ տարի ժամկետով, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի,
- սահմանված կարգով փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ օտարերկրյա պետությունների բուհերը) կամ փոխելու մասնագիտությունը,
- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
- ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ ուսումնառության տվյալ կամ ամբողջ ժամանակահատվածի համար,
- ավարտական փաստաթղթի (դիպլոմի) հետ միասին անվճար ստանալու համաեվրոպական նմուշի երկլեզու դիպլոմի հավելվածը:

13.2. Ուսանողը պարտավոր է՝

- ծանոթանալ սույն կարգին և հետևել դրա պահանջներին,
- կատարել դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
- հաճախել իր կրթական ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին,
- սահմանված ժամկետներում կատարել բոլոր ուսումնական առաջադրանքները,
- վճարովի հիմունքներով կրթություն ստանալու դեպքում ժամանակին վճարել ուսման վարձավճարը,
- հոգատար վերաբերվել ԵՊՀ գույքին,
- կատարել սույն կարգով, ԵՊՀ կանոնադրությամբ և ԵՊՀ ներքին իրավական այլ ակտերով սահմանված ուսանողի պարտականությունները:

ՀՀ Կրթության և գիտության նախարարություն

Հ ա ս տ ա տ վ ա ծ է՝
Հայաստանի Հանրապետության
Կրթության և գիտության նախարարի
2007 թ. հունիսի 19-ի N 588-Ա/Ք հրամանով

**ԲՈՒՀՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ
ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳ**

Երևան 2007

Բովանդակություն

Կարգի նպատակը	23
Կարգի խնդիրները	23
1. Ներածություն	24
2. Կրեդիտային համակարգի հիմնական դրույթները	24
3. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները	26
4. Կրեդիտային համակարգի հիմնական նորմերը ՀՀ բուհական համակարգում	27
4.1. Տարեկան աշխատածավալը և ուսումնական բեռնվածությունը	27
4.2. Կրեդիտների հատկացումը	27
4.3. Կրթական ծրագրերի աշխատածավալները	28
4.4. Գնահատման համակարգը	28
4.5. Ակադեմիական տեղեկագիրը	28
5. Կրեդիտային համակարգի տարրերը և ընթացակարգերը	29
5.1. Ուսումնական ծրագիրը (պլանը) և ավարտական պահանջները	29
5.2. Դասընթացները և կրթական մոդուլները	30
5.3. Դասընթացների տեղեկագիրքը	30
5.4. Ուսումնական գործընթացի և դասընթացների ժամանակացույցերը	31
5.5. Ուսումնառության անհատական ծրագիրը և գրանցումը դասընթացներին	31
5.6. Ուսման առաջադիմությունը	33
5.7. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը	33
5.8. Կրեդիտների փոխանցումը	33
5.9. Ավարտական առդիտ և աստիճանաշնորհում	34
6. Կրեդիտային համակարգի ինստիտուտները	34
6.1. Կրեդիտների փոխանցման գործառույթի համակարգումը	34
6.2. Ուսումնական խորհրդատուների ինստիտուտը	34
6.3. Ակադեմիական գրանցումների գրասենյակը	35
6.4. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները	35
7. Այլ դրույթներ	36
7.1. Բուհի տարեկան ուսումնական բեռնվածքի հաշվարկը	36

Կարգի նպատակը

Բուհում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգի⁴ նպատակը այս ասպարեզում ՀՀ բուհերի համար միասնական կանոնակարգային և կազմակերպական հենքի ձևավորումն է:

Կարգի խնդիրները

- ❖ Կրեդիտային համակարգի համար սահմանել միասնական չափորոշիչներ (սահմանումներ, նորմեր)՝ համահունչ ECTS համաեվրոպական կրեդիտային համակարգի պահանջներին, որոնք պետք է միասնական լինեն ՀՀ բուհական համակարգի համար:
- ❖ Սահմանել կրեդիտային համակարգում կիրառվող առանձին գործառույթները, ընթացակարգերը և գործընթացները, դրանց բնութագրիչները և իրականացման հնարավոր (պրակտիկայում հաջող կիրառություն գտած) լուծումները և մոտեցումները:
- ❖ Տալ ավանդական կրթական համակարգից ուսուցման կրեդիտային համակարգին անցնելու հիմնադրույթները:
- ❖ Բուհերին տրամադրել ուղեցույցներ կրեդիտային համակարգով ուսուցման իրենց սեփական կարգերը մշակելու համար՝ ելնելով առանձին բուհում կրեդիտային համակարգի հիմնական գործառույթների կիրարկման ամբողջականությունից:

⁴ Այսուհետ կարգ:

1. Ներածություն

1. ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգը ներդրվում է 2007/2008 ուստարվանից, կրթական կրեդիտների՝ որպես ուսումնական ծրագրերի պարտադիր տարր ներմուծմամբ և ուսանողների ակադեմիական տեղեկագրերում դրանց պարտադիր նշումով:
2. ՀՀ բարձրագույն կրթության համակարգում կրեդիտային համակարգի ամբողջական (փոխանցման և կուտակման) կիրարկումը պարտադիր է՝ սկսած 2010/2011 ուստարվանից:
3. Կրեդիտների փոխանցման և կուտակման ազգային համակարգը որպես հիմք է ընդունում համաեվրոպական ECTS կրեդիտային համակարգը, որի հիմնական կանոնները գործում են նաև ազգային կրեդիտային համակարգում՝ գործառնությունների և ընթացակարգերի իրականացման միասնական հենք և ուղեցույցներ տրամադրելով այն կիրարկող բուհերին:
4. Ազգային մակարդակում կրեդիտային համակարգի իրականացման միասնականություն ապահովելու նպատակով ԿԳՆՏ-ն պարբերաբար նորացնում է համակարգը՝ ներառելով նոր սահմանումներ, նորմատիվներ, ուղեցույցներ և գործիքակազմ: Այդ համատեքստում յուրաքանչյուր բուհ ինքնուրույն է իր կրթական ծրագրերում կրեդիտային համակարգի կիրարկման հարցերում:
5. Սույն օրինակելի կարգի հիման վրա բուհի կողմից ստեղծված կրեդիտային համակարգով ուսուցման կազմակերպման կարգը հաստատվում է բուհի գիտական խորհրդի կողմից:

2. Կրեդիտային համակարգի հիմնական դրույթները

Համաեվրոպական ECTS կրեդիտային համակարգի հետևյալ սահմանումները և դրույթները ընդունված են Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում և չեն կարող ձևափոխվել բուհերի կողմից:

1. **Կարողությունը** գիտելիքի, ընկալման, ունակությունների և հմտությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական (առանձնահատուկ ուսման տվյալ բնագավառի համար) և ընդհանուր (անկախ բնագավառից):
2. **Կրթական արդյունքը** այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել ուսանողը ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման չափանիշով, որը հնարավորություն է տալիս դատել դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման մասին: Կրթական արդյունքը և գնահատման չափանիշը միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները:
3. **Կրթական (ուսումնական) մոդուլը** ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն մասն է, որի համար կրեդիտ է տրվում: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը 1 կիսամյակ է՝ դրանով սահմանված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ: Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները շնորհվում են ամբողջությամբ, այլ ոչ թե առանձին մասերով:
4. **ECTS Կրեդիտը** Դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ժամաքանակով արտահայտված ուսումնական բեռնվածքի չափման պայմանական միավոր է, որը տրվում է ուսանողին նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:
5. **ECTS կրեդիտի կախորագույն հատկանիշներն են.**
 - ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները,

⁵ ՀՀ Կրթության և գիտության նախարարություն:

այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,

- կրեդիտը չափում է միայն ուսանողի ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),
- կրեդիտը ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ թվանշանների) հետ միասին,
- ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատածավալը: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
- կրեդիտը չի փոխարինում թվանշաններով ուսանողի գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով,
- կրեդիտը չի չափում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով: Կրեդիտային և գնահատման համակարգերի միջև փոխադարձ ներգործության որևէ կապ չկա:

6. **Կրեդիտային համակարգը** ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորման աստիճանը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

7. **Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը** միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուստարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում (ԵԲԿՏ) ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների արժևորման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ տեղափոխումը դյուրացնելու համար:

8. **Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգի հատկանիշներն են.**

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն:
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների համառոտագրերը, նախապայմանները և հատկացված կրեդիտները, դասավանդման և գնահատման մեթոդները պետք է նախապես հրապարակվեն (տպագրվեն կամ տեղադրվեն բուհի կայքում),
- հավատարմագրված բուհերում և/կամ կրթական ծրագրերում ստացված կրեդիտները սկզբունքորեն փոխանցելի են բուհերի և կրթական ծրագրերի միջև, եթե դրանց կրթական արդյունքները համարժեք են,
- եթե կրեդիտների փոխանցման գործընթացում ներգրավված բուհերը այդ մասին կնքել են ECTS-ի պահանջներին համապատասխանող եռակողմ (ուսանող, առաքող և ընդունող բուհեր) կրթական համաձայնագիր, ապա այն ունի իրավական ուժ:

3. Կրեդիտային համակարգի հիմնական գործառնությունները

1. Ուսուցման կրեդիտային համակարգին անցնող բուհերը պետք է իրականացնեն համապատասխան ծրագրային և կազմակերպական վերափոխումներ, որոնց մասշտաբները պայմանավորված են բուհում կրեդիտային համակարգի հիմնական գործառնությունների ներդրման ամբողջականությունից:
2. Կրեդիտային համակարգի հիմնական գործառնությունները երկուսն են՝
 - ա) *կրեդիտների փոխանցում*, ինչը ենթադրում է ուսումնական ծրագրի բոլոր բաղկացուցիչների աշխատածավալների կրեդիտների օգնությամբ արժևորում և այդ կրեդիտների փոխանցման հնարավորություն,
 - բ) *կրեդիտների կուտակում*, ինչը ուսանողին տալիս է դասախոսի, դասընթացների և դրանց յուրացման կիսամյակների ընտրության, ինչպես նաև ուսումնառության ինտենսիվության կարգավորման հնարավորություն և ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուտակման գործընթացի առկայություն:Այս գործառնությունները բնութագրվում են մի շարք հատկանիշներով և ուղեկցվում համապատասխան ընթացակարգերով:
3. *Կրեդիտների փոխանցման* գործառնության հիմնական հատկանիշներն են.
 - մոդուլացված ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղադրամասերի (դասընթացներ, կրթական մոդուլներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլն) աշխատածավալներն արտահայտված են ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունն (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք) արտահայտող ECTS կրեդիտներով,
 - կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն նույն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող ծրագրի պահանջներին համապատասխան:
4. *Կրեդիտների կուտակման* գործառնության հիմնական հատկանիշներն են.
 - ուսումնական ծրագիրը բաղկացած է ինչպես պարտադիր, այնպես էլ ընտրովի դասընթացներից, որոնց յուրացման հաջորդականությունը սահմանափակվում է միայն դասընթացների նախապայմաններով,
 - ուսանողների կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման ընթացակարգերի առկայություն,
 - ուսանողների ուսումնառության անհատական ծրագրերի առկայություն,
 - դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում ուսանողի կողմից դրանց ընտրության հնարավորություն՝ կախված դասընթացի կայացման ժամանակացույցից և/կամ դասախոսի նախապատվությունից,
 - ուսանողի կողմից ուսումնառության ինտենսիվության, հետևաբար նաև ուսումնառության ծրագրի տևողության կարգավորման հնարավորություն⁶:
5. *Կրեդիտների փոխանցման* գործառնությամբ պահանջում է միայն ծրագրային վերափոխումներ, իսկ *կրեդիտների կուտակման* գործառնությամբ՝ նաև ուսման կազմակերպման գործընթացի համապատասխան վերակառուցում՝ պահանջվող ընթացակարգերի ապահովման նպատակով:
6. *2007/08 ու.տ-ից կրեդիտային համակարգը ՀՀ բուհերի բակալավրի կրթական ծրագրերում կարող է ներդրվել միայն փոխանցման գործառնության մասով (առանց 3-րդ կետի II մասի), իսկ մագիստրոսի կրթական ծրագրերում՝ նաև կուտակման գործառնությամբ (առանց 4-րդ կետի V մասի):*

⁶ Ենթադրում է համապատասխան օրենսդրական դաշտի առկայություն:

4. Կրեդիտային համակարգի հիմնական նորմերը ՀՀ բուհական համակարգում

4.1. Տարեկան աշխատաձավարը և ուսումնական բեռնվածությունը

1. ՀՀ բարձրագույն կրթության համակարգում բոլոր կրթական աստիճաններում առկա ուսուցմամբ ուսանողի տարեկան ուսումնական բեռնվածությունը սահմանվում է 1800 ժամ, որը համարժեք է 60 ECTS կրեդիտի:
2. 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը:
3. Ուսումնական տարվա տևողությունը 40 շաբաթ է, որից առնվազն 32-ը տրամադրվում է ուսումնական պարապմունքներին: Ուսումնական գործընթացը կազմակերպվում է 2 կիսամյակներով՝ աշնանային և գարնանային:
4. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի:
5. Բակլավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական լսարանային բեռնվածությունը կազմում է 23-30 ժամ⁷, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ 15-22 ժամ:
6. Առկա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 60 կրեդիտ:
7. Բացառիկ դեպքերում, ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողը համապատասխան թույլտվության դեպքում կարող է ստանձնել լրացուցիչ ուսումնական բեռնվածություն:

4.2. Կրեդիտների հատկացումը

1. Կրթական ծրագրի առանձին մոդուլներին կրեդիտների հատկացումը ելնում է մոդուլով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար միջին ուսանողից պահանջվող աշխատաժամանակի (լրիվ ուսումնական բեռնվածության) իրատեսական կանխատեսումից⁸:
2. Հատկացվող կրեդիտների թվի և լսարանային (կոնտակտային) ժամերի միջև չկա միարժեք կապ: Կրեդիտների թիվը կախված է նաև պարապմունքների ձևից (դասախոսություն, սեմինար, գործնական կամ լաբորատոր պարապմունք և այլն), դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներից և այլն:
3. Դասընթացը մշակող ուսումնական ստորաբաժանումը այնպես է պլանավորում ուսանողի ուսումնական աշխատանքը, որ դրա կատարման համար պահանջվող ժամաքանակը համապատասխանի դասընթացին հատկացված կրեդիտների ժամային համարժեքին:
4. Կրթական մոդուլին հատկացվող կրեդիտները պետք է ունենան ամբողջական արժեքներ՝ ուսումնական ծրագրի մանրատվածության վտանգից խուսափելու և դասընթացների ընտրությունը (այդ թվում նաև այլ կրթական ծրագրերից) դյուրացնելու նպատակով:

⁷ Առանց ֆիզգաստիքականության պարապմունքների:

⁸ Տե՛ս «Ուսումնական ծրագրի (պլանի) կրեդիտային հենքով վերակառուցման և կրթական մոդուլներին կրեդիտների հատկացման մեթոդական ուղեցույց»:

5. Ուսանողի կողմից ծրագրի ընդհանուր կրթական արդյունքներին համապատասխան կարողությունների ձեռքբերումը հաստատվում է ավարտական աշխատանքի (նախագիծ, ատենախոսություն և այլն) կատարումով և պաշտպանությամբ կամ ծրագրի ավարտից հետո կազմակերպվող ավարտական (պետական) քննությամբ, որը չի կրկնում կիսամյակային քննություններով հաստատված կրթական արդյունքների գնահատումները:

4.3. Կրթական ծրագրերի աշխատաձավալները

1. Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատաձավալը 240 կրեդիտ է, իսկ բժշկական մասնագիտությունների համար՝ 300 կրեդիտ:
2. Մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատաձավալը 60-120 կրեդիտ է, իսկ բժշկական մասնագիտությունների համար՝ 180 կրեդիտ:
3. Բոլոր երեք աստիճանների կրթական ծրագրերում⁹ ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին:

4.4. Գնահատման համակարգը

1. Ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը պետք է ունենա գնահատման և նշագրման հստակ և հրապարակված չափանիշներ:
2. Օգտագործվող գնահատման սանդղակը պետք է հնարավորություն տա առանց դժվարության հաշվարկելու կիսամյակի և ուսումնառության ողջ շրջանի ընթացքում ուսանողի վաստակած վարկանիշային միավորները¹⁰՝ մինևույն ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողների առաջադիմությունները համեմատելու համար:
3. Օգտագործվող գնահատման սանդղակը պետք է հնարավորություն տա հաշվարկելու ուսանողի միջին որակական գնահատականը կիսամյակի և ուսումնառության ցանկացած ժամանակահատվածի համար՝ ուսանողի բացարձակ առաջադիմության չափման համար:
4. Գնահատումները կարող են կատարվել ինչպես թվային կամ տառային նշագրումով տարբերակված գնահատականներով, այնպես էլ «ստուգված/ չստուգված» սկզբունքով:
5. Գնահատման եղանակից և գնահատականների նշագրման ձևից (ստուգաբք կամ տարբերակված գնահատում) անկախ բոլոր տեսակի գնահատումներն իրականացվում են ուսումնական պարապմունքների ավարտից հետո՝ առանձին քննաշրջաններում կազմակերպվող քննությունների օգնությամբ¹¹:

4.5. Ակադեմիական տեղեկագիրը

1. Ակադեմիական տեղեկագիրն օգտագործվում է ուսանողի ուսումնական գործունեությունը և առաջադիմությունն ուսման որոշակի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար՝ ուսումնասիրած դասընթացների և կրթական մոդուլների, շնորհված կրեդիտների և ստացած գնահատականների գրանցման միջոցով: Այն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

⁹ Բացառությամբ երրորդ աստիճանի կրթական ծրագրի որոշ հետազոտական բաղադրամասերի:

¹⁰ Սահմանումը տե՛ս 4.5. կետում:

¹¹ Բացառությամբ դասընթացը սեղմ ժամկետներում վարող այցելու դասախոսի, որը կարող է ընդունել քննությունը դասընթացի ավարտին՝ քննաշրջանի համար առանձնացվող ժամկետից առաջ:

2. Բուհի համապատասխան ուսումնական ստորաբաժանումը յուրաքանչյուր ուսանողի համար նրա ընդունման պահից սկսած վարում է ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի վաստակած կրեդիտները և գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների:
3. Ուսանողի ստացած կրեդիտը վավերագրվում է նրա ակադեմիական տեղեկագրում և ուժի մեջ է նրա ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:
4. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածը ուսանողի առաջադիմությունը ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները¹²՝
 - գումարային կրեդիտների քանակը,
 - գնահատված կրեդիտների քանակը,
 - վարկանիշային միավորները,
 - միջին որակական գնահատականը:
5. *Գումարային կրեդիտը* կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:
6. *Գնահատված կրեդիտը* գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է տարբերակված գնահատականներով:
7. *Վարկանիշային միավորը* բոլոր գնահատված կրեդիտների և դրանց համապատասխանող գնահատականների արտադրյալների գումարն է:
8. *Միջին որակական գնահատականը (ՄՈԳ)* գնահատականների կրեդիտներով կշռված միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ):
9. Տարբերակում են *կիսամյակային* (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և *ամփոփիչ* (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորներ և ՄՈԳ-եր:
10. Բուհը պարտավոր է ուսանողի հիմնավորված պահանջի դեպքում, համաձայն բուհում գործող կարգի, տրամադրել նրա ակադեմիական տեղեկագիրը ավարտված ուսումնառության կամ ուսումնական ծրագրի չավարտված մասի համար:

5. Կրեդիտային համակարգի տարրերը և ընթացակարգերը

5.1. Ուսումնական ծրագիրը (պլանը) և ավարտական պահանջները

1. Մասնագիտության ուսումնական ծրագիրը (պլանը) ներկայացվում է համապատասխան կրթամասերում խմբավորված պարտադիր և ընտրովի (եթե այդպիսիք նախատեսված են) դասընթացների ցանկով: Կրթամասերի քանակը և անվանումները սահմանում է բուհը:
2. Յուրաքանչյուր դասընթացի (կրթական մոդուլի) համար նշվում է նրա եզակի նույնացման թվանիշը (դասիչը), լրիվ անվանումը, հատկացված կրեդիտների քանակը, պարապմունքի իրականացման ձևը, կիսամյակի համարը (ամրագրված ուսումնական պլանի դեպքում) կամ անվանումը (աշնանային/գարնանային՝ ճկուն ուսումնական ծրագրի դեպքում), դասընթացի նախապայմանը (եթե այդպիսին կա) և գնահատման ձևը:

¹² Տես ակադեմիական տեղեկագրի օրինակելի ձևը:

3. Կրթական ծրագրի ավարտական պահանջներում նշվում է համապատասխան որակավորում շնորհելու համար անհրաժեշտ կրեդիտների ընդհանուր քանակը (այդ թվում՝ ըստ կրթամասերի) և նվազագույն ամփոփիչ ՄՈԳ-ը (ՄՈԳ-ի նվազագույն շեմ կարող է սահմանվել նաև մասնագիտական կրթամասի համար):
4. Բուհը, իր հայեցողությամբ, կարող է սահմանել ընդհանուր ավարտական պահանջներ, որոնք ընդհանուր են տվյալ կրթական աստիճանի բոլոր մասնագիտությունների համար և մասնագիտական ավարտական պահանջներ, որոնք վերաբերում են միայն առանձին մասնագիտություններին:

5.2. Դասընթացները և կրթական մոդուլները

1. Մեծածավալ դասընթացները կարող են բաժանվել առանձին կրթական մոդուլների: Դասընթացների մոդուլացումը կատարվում է՝ ելնելով նվազագույն կիսամյակների ընթացքում դրանք ավարտելու սկզբունքից:
2. Դասընթացները (կրթական մոդուլները) իրենց բնույթով բաժանվում են 3 հիմնական խմբերի՝
 - ա) պարտադիր դասընթացներ, որոնք յուրացվում են սահմանված կիսամյակներում,
 - բ) պարտադիր դասընթացներ, որոնց յուրացման կիսամյակը ընտրում է ուսանողը՝ պահպանելով դրանց նախապայմանները,
 - գ) ընտրովի դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

5.3. Դասընթացների տեղեկագիրքը

1. Բուհը հրապարակում է դասընթացների տեղեկագիրք (տպագրված և/կամ բուհի կայքում տեղադրված էլեկտրոնային տարբերակի տեսքով), որը թարմացվում է յուրաքանչյուր ուստարի:
2. Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է բուհում իրականացվող կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը մատչելի դարձնելու համար և պետք է պարունակի.
 - ա) ընդհանուր տեղեկատվություն բուհի վերաբերյալ՝ տեսակը և կարգավիճակը, ուսումնական ստորաբաժանումները, առաջարկվող կրթական ծրագրերը և ընդունելության պայմանները, ուսումնական գործընթացի ժամանակացույցը, հիմնական ներբուհական կանոնները (հատկապես կրեդիտների կուտակման, պաշտոնական ճանաչման և փոխանցման վերաբերյալ) և այլն:
 - բ) տեղեկատվություն կրթական ծրագրերի վերաբերյալ.
 - ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, մուտքի շեմային պահանջները, նպատակները և նախանշված էլքային արդյունքները, կրթությունը շարունակելու հնարավորությունները, ծրագրի կառուցվածքը կրեդիտներով, քննական և գնահատման կանոնները, ավարտական ատեստավորման ձևը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
 - առանձին դասընթացի նկարագրությունը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը (որը պետք է պարունակի տեղեկատվություն դասընթացի տեսակի և մակարդակի վերաբերյալ), ուսուցման տարին և/կամ կիսամյակը, դասընթացի կրեդիտների քանակը (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրներն՝ արտահայտված կրթական արդյունքներով և սպասվող կարողություններով, համառոտագիրը (հակիրճ բովանդակությունը), անհրաժեշտ

նախապայմանները, երաշխավորվող գրականությունը, ուսուցման և գնահատման մեթոդները, դասավանդման լեզուն և այլն:

գ) ընդհանուր տեղեկատվություն ուսանողների համար.

- անհրաժեշտ տեղեկատվություն օտարերկրյա ուսանողների համար՝ ուսումնառության և բնակվելու պայմանները, միջազգային կրթական ծրագրերը, լեզվական գործող դասընթացները և այլն,
- նյութական օգնության հնարավորությունները, ուսման վարձերի գեղչման և փոխհատուցման պայմաններն ու կանոնները, գործող ուսանողական ծառայությունները, ուսումնական ենթակառուցվածքները և այլն:

5.4. Ուսումնական գործընթացի և դասընթացների ժամանակացույցերը

1. Ուսումնական տարվա սկզբում բուհը հրապարակում է (տպագրված և/կամ բուհի կայքում տեղադրված էլեկտրոնային տարբերակի տեսքով) տվյալ ուստարվա ուսումնական օրացույցը (ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցը) ըստ կիսամյակների, որտեղ ըստ օրերի նշվում են ուսուցման սկիզբը և ավարտը, դասընթացներին գրանցման (եթե նախատեսված է) և այդ գրանցումներում փոփոխությունների կատարման ժամկետները, քննաշրջանները և արձակուրդները:
2. Եթե ուսումնական գործընթացով նախատեսված է դասընթացներին ուսանողների գրանցման գործառույթ, ապա բուհը կիսամյակի սկզբից առնվազն 1 շաբաթ առաջ հրապարակում է դասընթացների և քննությունների ժամանակացույցը, որը տեղեկատվություն է տալիս դասընթացների կայացման վայրի, օրվա և ժամի, դասախոսի, ուսանողների թույլատրելի քանակների, քննությունների օրվա և այլնի վերաբերյալ:

5.5. Ուսումնառության անհատական ծրագիրը և գրանցումը դասընթացներին

1. Կրեդիտների կուտակման գործառույթի դեպքում օգտագործվում են համապատասխան գործիքներ և ընթացակարգեր, մասնավորապես՝ ուսումնառության անհատական ծրագրեր և ուսանողների գրանցում դասընթացներին:
2. Ուսումնառության անհատական ծրագիրը կազմելիս ուսանողի համար ելակետային փաստաթուղթ է ծառայում դասընթացների տեղեկագիրքը:
3. Հիմք ընդունելով դասընթացների տեղեկագրքում տրված կրթական ծրագրի ավարտական պահանջները, առաջարկվող դասընթացների ցանկը և առանձին դասընթացների վերաբերյալ տեղեկատվությունը, ուսումնառության սկզբում ուսանողն ուսումնական խորհրդատուի օգնությամբ կազմում է ուսումնառության իր անհատական ծրագիրը, այն տալիս է հաստատման համապատասխան ուսումնական ստորաբաժանման ղեկավարին և օրինակներից մեկը հանձնում ակադեմիական գրանցումներն իրականացնող կառույցին¹³:
4. Ուսումնառության անհատական ծրագրի ձևաթերթը մշակում է բուհը: Անհատական ծրագրում ըստ ուսման տարիների և կիսամյակների ներկայացվում են պարտադիր և ընտրովի դասընթացների ցանկը և դրանց ամրագրված կրեդիտները:

¹³ Ակադեմիական գրանցումների գրասենյակի վերաբերյալ տե՛ս ստորև:

5. Անհատական ծրագրում նշված դասընթացներում ընդգրկվելու համար ուսանողը սահմանված ժամկետներում պետք է գրանցվի ակադեմիական գրանցումներն իրականացնող կառույցում:
6. Դասընթացներին գրանցման գործընթացը կարող է սկսել նախորդ կիսամյակում և շարունակվում է մինչև տվյալ կիսամյակի պարապմունքների սկիզբը: Բոլոր ուսանողները պետք է գրանցված լինեն մինչև տվյալ կիսամյակի սկիզբը:
7. Դասընթացներին ուսանողների ընդգրկումն իրականացվում է ըստ գրանցման հերթականության, եթե այլ բան նախատեսված չէ դասընթացի նախապայմանով:
8. Մահմանված ժամկետից 2 շաբաթ հետո դասընթացներին մասնակցելու բոլոր տեսակի գրանցումները դադարեցվում են:
9. Բուհը կարող է չեղյալ հայտարարել ցանկացած դասընթացի անցկացումը տվյալ կիսամյակում, եթե դրանում ընդգրկված չեն բավարար թվով ուսանողներ: Նման դեպքերում այդ դասընթացին գրանցված ուսանողները սահմանված ժամկետներում իրենց անհատական ուսումնական ծրագրերում կատարում են համապատասխան փոփոխություններ՝ ընտրելով նոր դասընթաց, իսկ չկայացած դասընթացը կարող է տեղափոխվել հաջորդ տարի:
10. Անհրաժեշտության դեպքում, սահմանված ժամկետներում ուսանողը կարող է փոփոխություններ կատարել ուսումնառության իր անհատական ծրագրում՝ դրանք նախապես համաձայնեցնելով իր ուսումնական խորհրդատուի և համապատասխան ստորաբաժանման ղեկավարության հետ, այնուհետև գրանցվել նոր դասընթացների:
11. Ուսումնառության անհատական ծրագրի փոփոխությունների դեպքում (դասընթացի բացթողում և/կամ ավելացում) ուսանողը լրացնում է փոփոխությունների համապատասխան ձևաթերթը:
12. Ուսումնառության անհատական ծրագրի փոփոխությունների ձևաթերթը մշակում է բուհը: Ձևաթերթում նշվում են բաց թողնված և/կամ ավելացված դասընթացները և դրանց կրեդիտները, համապատասխան կիսամյակները և ուստարիները:
13. Անհատական ծրագրի փոփոխության (դասընթացից ազատումը, դասընթացի բացթողումը և դասընթացի ավելացումը) ընթացակարգը հետևյալն է՝
 - 13.1. դասընթացից ազատվելը.
 ուսանողը կարող է չեղյալ համարել ցանկացած նախորդ գրանցում տվյալ դասընթացին՝ մինչև տվյալ կիսամյակի պարապմունքների սկիզբը,
 - 13.2. դասընթացի բացթողումը.
 ա) ուսանողը կարող է բաց թողնել դասընթացը ուսումնական խորհրդատուի համաձայնությամբ՝ պարապմունքների առաջին երկու շաբաթների ընթացքում,
 բ) տվյալ կիսամյակի 3-րդից մինչև 8-րդ շաբաթը ներառյալ բացթողումը ձևակերպելու համար ուսանողը պարտավոր է ստանալ նաև այն վարող դասախոսի և համապատասխան ուսումնական ստորաբաժանման ղեկավարության համաձայնությունը,
 - 13.3. դասընթացի ավելացումը.
 ուսանողն իր ընտրացանկում դասընթաց կարող է ավելացնել ուսումնական խորհրդատուի և դասախոսի համաձայնությամբ՝ պարապմունքների առաջին երկու շաբաթների ընթացքում:
14. Ուսանողը կազմում է տվյալ կիսամյակի պարապմունքների իր անհատական դասացուցակը՝ ելնելով ուսումնառության իր անհատական ծրագրից և դասընթացների հրապարակված ժամանակացույցից:
15. Մահմանված ժամկետում ուսումնառության անհատական ծրագիր չներկայացնելու դեպքում բուհն ուսանողի ուսումնառությունը կազմակերպում է տվյալ մասնագիտության համար կազմված տիպային ուսումնական պլանով:
16. Բուհում կրեդիտների կուտակման գործառնությունից բացակայության դեպքում գործում են ավանդական ուսումնական պլանները՝ դասընթացների և կրթական մոդուլների յուրացման ամրագրված հաջորդականությամբ:

5.6. Ուսման առաջադիմությունը

1. Ըստ ուսման առաջադիմության ուսանողները դասակարգվում են առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում գտնվող և հեռացման ենթակա ուսանողների:
2. Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե՝
 - ա) կիսամյակում ունի 30 կրեդիտ միջին ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով);
 - բ) հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների¹⁴ կրեդիտները;
 - գ) ապահովել է տվյալ կրթական աստիճանի (ծրագրի) համար սահմանված կիսամյակային ՄՈԳ-ի նվազագույն շեմը:
3. Ուսանողը համարվում է փորձաշրջանի կարգավիճակում, եթե չի բավարարել նախորդ կետում նշված երեք պայմաններից որևէ մեկը:
4. Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանողին հնարավորություն է տրվում ուղղել թերացումներն ու բացթողումները և բարձրացնել ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան: Փորձաշրջանի տևողությունը սահմանում է բուհը:
5. Փորձաշրջանի կարգավիճակում գտնվող ուսանողը դառնում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետում չի դուրս գալիս այդ կարգավիճակից:
6. Միևնույն կրթական ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողների ակադեմիական առաջադիմությունները համեմատվում են նրանց վարկանիշային միավորների օգնությամբ:

5.7. Դասընթացի վերահանձնումը և կրկնումը

1. Դրական գնահատված դասընթացի քննության վերահանձնում չի թույլատրվում:
2. Անբավարար գնահատված դասընթացի վերահանձնման կարգը սահմանում է բուհը:
3. Տվյալ կրթական ծրագրի համար սահմանված կիսամյակային ՄՈԳ-ի նվազագույն շեմն ապահովելու նպատակով ուսանողը համապատասխան ուսումնական ստորաբաժանման թույլտվությամբ կարող է կրկնել դասընթացը, սակայն տվյալ դասընթացին հատկացված կրեդիտներից ավել կրեդիտներ ուսանողին չեն տրվում, իսկ ՄՈԳ-ում հաշվի է առնվում այդ դասընթացի վերջին գնահատման արդյունքը:
4. Հաջողությամբ հանձնած դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ուսանողի ցուցաբերած առաջադիմությունից կամ ուսման ընդհատման հանգամանքից:
5. Կրեդիտների կուտակման արդյունքում վերանում է բուհից հեռացված ուսանողի կողմից կիսամյակը ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

5.8. Կրեդիտների փոխանցումը

1. Կրեդիտները մեկ բուհից մյուսը փոխանցելի են առանձին դասընթացների, դասընթացների խմբի կամ ուսումնառության որոշակի շրջանների տեսքով: Փոխանցումը կատարվում է ուսանողի հայտի հիման վրա՝ երկու բուհերի համաձայնությամբ:
2. Կրեդիտները փոխանցելի են ուսումնական ծրագրերի և բուհերի միջև, եթե դրանք համապատասխանում են որոշակի պահանջների: Որևէ ուսումնական ծրագրից ստացված կրեդիտները կարող են փոխանցվել մեկ այլ ուսումնական ծրագիր, եթե՝
 - ա) դրանց բովանդակությունները միանման են,

¹⁴ Տե՛ս դասընթացների ա) խումբը, բաժին 5.2, կետ 2:

բ) կան բովանդակային ոչ էական տարբերություններ,

գ) առկա են բովանդակային տարբերություններ, սակայն վերջնական կրթական արդյունքները համարժեք են:

3. Այլ բուհում ուսանողի ուսումնառության որոշակի շրջանի անցկացման դեպքում ուսումնառության ծրագիրը դառնում է եռակողմ համաձայնագրի առարկա՝ ուսանողի, առաքող և ընդունող բուհերի միջև:

5.9. Ավարտական ատոլիտ և աստիճանաշնորհում

1. Կրեդիտների կուտակման գործառույթի դեպքում շրջանավարտների աստիճանաշնորհումը կատարվում է ծրագրի ավարտական պահանջների կատարման ատոլիտից հետո, որը կատարվում է ակադեմիական գրանցումներն իրականացնող կառույցի և համապատասխան ուսումնական ստորաբաժանման մասնակցությամբ:
2. Ավարտական ատոլիտով ստուգվում են ուսանողի ակադեմիական տվյալների (կուտակած կրեդիտների քանակի ու բովանդակության, ամփոփիչ ՄՈԳ-ի և ավարտական ատեստավորման) համապատասխանությունը մասնագիտության ավարտական պահանջներին:

6. Կրեդիտային համակարգի ինստիտուտները

6.1. Կրեդիտների փոխանցման գործառույթի համակարգումը

1. Կրեդիտների փոխանցման և ուսանողների միջբուհական փոխանակման գործառույթների կազմակերպման համար բուհերը նշանակում են համապատասխան բուհական համակարգողներ:

6.2. Ուսումնական խորհրդատուների ինստիտուտը

1. Կրեդիտների կուտակման գործառույթի դեպքում ուսանողների անհատական ուսումնական ծրագրերը կազմելու և ուսման ընթացքում նրանց աջակցելու նպատակով բուհերի մասնագիտացնող ստորաբաժանումները կազմակերպում են ուսումնական խորհրդատուների ծառայություն, որում ընդգրկվում են մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի ուսումնական ծրագրերին քաջատեղյակ մասնագետները:
2. Մասնագիտության կամ մասնագիտությունների խմբի խորհրդատուների թիվը սահմանում է բուհը՝ ելնելով դրանցում ընդգրկված ուսանողների քանակից և բուհի ռեսուրսային հնարավորություններից:
3. Ուսումնական խորհրդատուն իրականացնում է խորհրդատվական ծառայություններ մեկ կամ մի քանի հարակից մասնագիտությունների գծով և հսկում է իրեն կցված ուսանողների առաջընթացը՝ առաջինից մինչև ավարտական կուրս:
4. Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, առավել արդյունավետ և նախընտրելի անհատական ուսումնական ծրագրեր կազմելու նպատակով նրանց համար պարբերաբար իրականացնում խմբային և անհատական խորհրդատվություններ, աջակցում անհատական ծրագրերում փոփոխություններ կատարելիս և այլ հարցերում:
5. Ուսումնական խորհրդատուի իրավունքներն ու պարտականությունները սահմանում է բուհը:

6.3. Ակադեմիական գրանցումների գրասենյակը

Կրեդիտների կուտակման գործառնության ընթացակարգերը ապահովելու նպատակով բուհերը կարող են ստեղծել համաբուհական կամ ֆակուլտետային ակադեմիական գրանցումների գրասենյակներ: Ակադեմիական գրանցումների գրասենյակի հիմնական գործառնություններն են.

- 1) կազմել և հրապարակել (տպագիր և/կամ էլեկտրոնային տարբերակով) բուհի դասընթացների տեղեկագիրքը յուրաքանչյուր ուստարվա համար,
- 2) կազմել և հրապարակել (տպագիր և/կամ էլեկտրոնային տարբերակով) տեղեկագրքում ներկայացված դասընթացների և դրանց քննությունների ժամանակացույցերը յուրաքանչյուր կիսամյակի համար,
- 3) ապահովել դասընթացներին ուսանողների գրանցման և ընդգրկման (այդ թվում՝ ինտերնետի օգնությամբ) գործընթացը,
- 4) ապահովել դասընթացների և դրանց առանձին բաղադրամասերի ուսումնական հոսքերի ձևավորումը և պարապմունքների կազմակերպումը,
- 5) գրանցել և հսկել ուսանողների դասահաճախումները,
- 6) ապահովել քննական ամփոփագրերի պատրաստումը, տրամադրումը և քննությունների արդյունքների մուտքագրումն ուսանողների ակադեմիական տվյալների միասնական (էլեկտրոնային) բազայում,
- 7) հաշվարկել և վերահսկել ուսանողների ակադեմիական առաջադիմության ցուցանիշները (ՄՈԳ և կուտակած կրեդիտների քանակ), պատրաստել և պարբերաբար թարմացնել ուսանողների ակադեմիական տեղեկագրերը,
- 8) համապատասխան ուսումնական ստորաբաժանումներին (ֆակուլտետներին) տրամադրել տեղեկատվություն ուսանողների առաջադիմության և դասահաճախումների վերաբերյալ,
- 9) ուսումնական ստորաբաժանումների հետ համատեղ իրականացնել ավարտական պահանջների կատարման աուդիտ,
- 10) ապահովել գրասենյակի կայքի շահագործումը, անհրաժեշտ ուսումնական (դասընթացների և քննությունների ժամանակացույցեր) և մեթոդական (դասընթացների տեղեկագիրք) տեղեկատվության տեղադրումը կայքում և դրանց պարբերաբար թարմացումը,
- 11) իրականացնել օժանդակ և հարակից այլ գործառնություններ:

6.4. Ուսանողի իրավունքներն ու պարտականությունները

1. Ուսանողը պարտավոր է՝
 - ծանոթանալ կրեդիտային համակարգով ուսուցման կարգին և ուսումնառության իր անհատական ծրագիրը կազմելիս խստորեն հետևել դրա պահանջներին,
 - կատարել ուսումնական դասընթացների և քննությունների համար սահմանված պահանջները,
 - կանոնավոր հաճախել ուսումնառության իր անհատական ծրագրում ընդգրկված բոլոր դասընթացներին:
2. Ուսանողը՝
 - պետք է հաշվի առնի, որ ակադեմիական գրանցումների գրասենյակը չի ստուգում և, հետևաբար, ոչ մի պատասխանատվություն չի կրում ուսանողի կողմից ընտրված դասընթացների կայացման ժամերի համընկման և ուսումնական ծրագրի պահանջներին դրանց համապատասխանության համար,

- կրում է անձնական պատասխանատվություն ուսումնառության իր անհատական ծրագրի և պարապմունքների դասացուցակի ճշտության և ամբողջականության ապահովման, դրանց ստուգման և ցանկացած սխալի կամ բացթողման անհապաղ ճշտման համար:

3. Ուսանողն իրավունք ունի՝

- ընտրելու տվյալ մասնագիտության (մասնագիտացման) ուսուցման համար բուհի կողմից առաջադրվող պարտադիր և ոչ պարտադիր դասընթացներ՝ ուսումնական ծրագրի պահանջներին համապատասխան,
- մինչև մեկ դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպքում կատարելու ընտրություն՝ ելնելով դասախոսի նախապատվությունից և/կամ դասընթացի կայացման ժամանակացույցից,
- բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից, յուրացնելու ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է տվյալ կամ այլ բուհում՝ այդ բուհի կանոններով սահմանված կարգով,
- միջբուհական փոխանակման և/կամ ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում ուսումնառության որոշակի շրջան (կիսամյակ, ուստարի) ուսումնառելու այլ բուհում (ներառյալ՝ օտարերկրյա),
- փոխադրվելու մեկ այլ բուհ (ներառյալ օտարերկրյա)՝ համաձայն ՀՀ կառավարության սահմանած կարգի,
- ցանկացած կրթական աստիճանում ընդհատելու կամ շարունակելու ուսումնառությունը բուհում,
- հիմնավորված կերպով դիմելու դեպքում ստանալու իր ակադեմիական տեղեկագիրը՝ կազմված ուսումնառության լրիվ կամ որևէ շրջանի համար:

7. Այլ դրույթներ

7.1. Բուհի տարեկան ուսումնական բեռնվածքի հաշվարկը

1. Ուսումնական ծրագրում և դասընթացների տեղեկագրքում դասընթացին հատկացված կրեդիտների հետ մեկտեղ նշվում է նաև շաբաթական լսարանային ժամաքանակն ըստ պարապմունքի ձևերի (դասախոսություններ, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներ և այլն):
2. Կրեդիտների կուտակման գործառույթի դեպքում ուսանողների անհատական ուսումնական ծրագրերի վերլուծության և առանձին դասընթացներին ուսանողների գրանցման տարիների ընթացքում կուտակված վիճակագրական տվյալների հիման վրա բուհը կազմում է ինչպես հաջորդ ուստարվա ուսումնական բեռնվածությունը, այնպես էլ դասընթացների ու քննությունների ժամանակացույցերն ըստ կիսամյակների:

II ԲԱԺԻՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մաս I.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը բակալավրի կրթական ծրագրով կազմակերպում է հեռակա ուսուցում «Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)» մասնագիտությամբ:

1. Ուսումնական ծրագրի կառուցվածքը

Բակալավրի ուսումնական ծրագիրը ներառում է հինգ հիմնական կրթամաս՝ ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական, ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական դասընթացներ, ինչպես նաև կրթական այլ մոդուլներ: Ծրագրի ընդհանուր կառուցվածքը բերված է ստորև.

Կրթամաս	Կրեդիտներ	Դասընթաց-մոդուլների քանակը
Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական	36	12
<i>Պարտադիր</i>	32	10
<i>Կամընտրական</i>	4	2
Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական	6	2
<i>Պարտադիր</i>	6	2
<i>Կամընտրական</i>	0	0
Ընդհանուր մասնագիտական	174	41
Հատուկ մասնագիտական դասընթացներ	0	0
Կրթական այլ մոդուլներ	24	5
ԸՆԴԱՄԵՆԸ	240	60

Բակալավրի պատրաստման ծրագիրը բաղկացած է 2 հիմնական կառուցամասից՝ ընդհանուր կրթական (պատրաստականության) և մասնագիտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված ուսումնական բեռնվածությունները՝ արտահայտված կրեդիտներով, ըստ ուսումնական կիսամյակների բերված են ստորև.

Կիսամյակ	I	II	III	IV	V	VI	VII	VI II	IX	X	Ընդամենը
Ընդհանուր կրթության կառուցամաս, <i>կրեդիտ</i>	10	10	6	6	4	6	0	0	0	0	42
Մասնագիտական կրթության	14	14	18	18	21	18	23	24	24	24	198

կառուցման, կրեդիտ											
Ընդամենը, կրեդիտ	24	24	24	24	25	24	23	24	24	24	240

Ուսումնական կիսամյակի համար սահմանված է 16-շաբաթյա տևողությունը, որից 4-ը հատկացվում է տեսական ուսուցման, 8-ը՝ ինքնուրույն աշխատանքի և կոնսուլտացիաների, իսկ 4-ը՝ քննաշրջանի համար: Առանձին դեպքերում, մասնագիտական առանձնահատկություններից ելնելով (օրինակ, լեզվական մասնագիտությունների համար), տեսական ուսուցման կազմակերպումը կարող է իրականացվել նաև 12-շաբաթյա ժամանակահատվածում: Ուսանողը կիսամյակում պետք է ունենա 20, առավելագույնը՝ 30 կրեդիտ ուսումնական բեռնվածություն, իսկ մեկ ուսումնական տարում՝ 48 կրեդիտ: Ուսումնական ծրագրի լրիվ աշխատածավալը համապատասխանում է 240 կրեդիտի:

1. Ծրագրի բովանդակությունը

2.1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս

Ծրագրի ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍ) կրթամասի աշխատածավալը 36 կրեդիտ է: Այն ներառում է կրթական մոդուլների երկու փաթեթ՝ պարտադիր և կամընտրական: Դրանց առկայությունը ծրագրում նպատակաուղղված է համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

ՀՍ պարտադիր դասընթացներ

ՀՍ պարտադիր դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլ-դասընթացները.

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ) ¹	Կիսամյակ	Գնահատման ձևը
1401/Bh01	Հայոց լեզու և գրականություն-1	2	12 (0/12/0)	1	ստուգարք
1401/Bh02	Հայոց լեզու և գրականություն-2	2	12 (0/12/0)	2	Առ. ընթ. գնահատ.
1704/Bh01	Ռուսաց լեզու-1	4	24 (0/24/0)	1	ստուգարք
1704/Bh02	Ռուսաց լեզու-2	4	24 (0/24/0)	2	ստուգարք
1602/Bh01	Օտար լեզու-1 ²	4	24 (0/24/0)	1	ստուգարք
1602/Bh02	Օտար լեզու-2	4	24 (0/24/0)	2	ստուգարք

¹ Այսուհետ՝ դ – դասախոսություն, գ – գործնական կամ սեմինար պարապմունք,

լ – լաբորատոր աշխատանք:

² Անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն

1704/Bh03 1602/Bh03	Լրացուցիչ լեզվական դասընթաց (Ռուսաց լեզու-3 կամ Օտար լեզու-3)	4	24 (0/24/0)	3	Առ. ընթ. գնահատ.
1106/Bh01	Հայոց պատմության հիմնահարցեր-1	2	12 (9/3/0)	4	ստուգարք
1106/Bh02	Հայոց պատմության հիմնահարցեր-2	2	12 (9/3/0)	5	Առ. ընթ. գնահատ.
1301/Bh01	Փիլիսոփայության հիմունքներ	4	24 (18/6/0)	4	Առ. ընթ. գնահատ.
0001/Bh01	Ֆիզդաստիարակություն	-	0(0/0/0)	1,2,3,4	ստուգարք

ՀՄՏ կամընտրական դասընթացներ

ՀՄՏ կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրելու երկուսը.

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
1001/Bh01	Տնտեսագիտություն	2	12 (12/0/0)	5	ստուգարք
1202/Bh01	Քաղաքագիտություն				ստուգարք
1901/Bh01	Բրավագիտություն				ստուգարք
1107/Bh01	Մշակութաբանություն	2	12 (12/0/0)	6	ստուգարք
2101/Bh01	Կրոնների պատմություն				ստուգարք

2.2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս

ԸՄԲ պարտադիր դասընթացներ

ԸՄԲ դասընթացների ցանկը ներառում է ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ հետևյալ մոդուլները.

Թվանիշ	Մոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ (դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
0002/Bh01	Քաղաքացիական պաշտպանություն արտակարգ իրավիճակներում բնակչության առաջին բուժօգնություն	4	24 (12/12/0)	6	ստուգարք

0708/Bh01	Էկոլոգիայի և բնապահպանության հիմունքներ	2	12 (12/0/0)	3	ստուգարք
-----------	---	---	-------------	---	----------

2.3. Ընդհանուր մասնագիտական կրթամաս

Կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական (ԸՄԴ) կրթամասը նպատակաուղղված է տվյալ մասնագիտությամբ պատրաստությունն իրականացնելու գործառույթի կատարմանը: Դրա բովանդակությունը, դասընթացների կազմը և դրանց կրեդիտատարությունը առանձին մասնագիտությունների համար բերված են ստորև:

Ծրագրի մասնագիտական հատվածում նախատեսված է նաև 2-ական կրեդիտ աշխատածավալով կուրսային 2 աշխատանքների կատարում, որոնց արդյունքների ստուգումը իրականացվում է տարբերակված գնահատման եղանակով (թվանշանով):

Թվանիշ	Սոդուլ-դասընթաց	Կրեդիտ	Լսարանային ժամ(դ/գ/լ)	Կիսամյակ	Գնահատման ձևը
0308/Bh01	Մաթեմատիկական անալիզ-1	4	12/12/0	1	Եզ. Գն. դաս.
0307/Bh06	Դիսկրետ մաթեմատիկա-1	4	12/12/0	1	Առ. եզ. քնն.
0309/Bh01	ԷՀՄ և ծրագրավորում-1	4	6/18/0	1	Եզ. Գն. դաս.
0307/Bh01	Անալիտիկ երկրաչափություն և հանրահաշվի տարրեր-1	2	6/6/0	1	Առ. եզ. քնն.
0308/Bh02	Մաթեմատիկական անալիզ-2	6	20/16/0	2	Եզ. Գն. դաս.
0309/Bh02	ԷՀՄ և ծրագրավորում-2	2	12/0/0	2	Առ. եզ. քնն.
0307/Bh07	Դիսկրետ մաթեմատիկա-2	4	12/12/0	2	Եզ. Գն. դաս.
0307/Bh02	Անալիտիկ երկրաչափություն և հանրահաշվի տարրեր-2	2	6/6/0	2	Առ. եզ. քնն.
0308/Bh03	Մաթեմատիկական անալիզ-3	6	20/16/0	3	Եզ. Գն. դաս.
0307/Bh03	Հանրահաշիվ-1	3	12/6/0	3	Առ. եզ. քնն.
0309/Bh04	ԷՀՄ ճարտարապետություն և ասեմբլեր լեզու-1	3	8/8/0	3	Առ. եզ. քնն.
0309/Bh03	ԷՀՄ և ծրագրավորում-3	4	6/18/0	3	Եզ. Գն. դաս.
0307/Bh11	Գրաֆիկների տեսություն	2	12/0/0	3	Առ. եզ. քնն.
0308/Bh04	Մաթեմատիկական անալիզ-4	6	20/16/0	4	Եզ. Գն. դաս.

0307/Bh04	Հանրահաշիվ-2	5	16/8/0	4	Եզ. Գն. դաս.
0309/Bh09	GUI ծրագրավորում	4	0/24/0	4	Առ. եզ. քնն.
0309/Bh05	ԷՀՄ ճարտարապետություն և ասեմբլեր լեզու-2	3	8/8/0	4	Եզ. Գն. դաս.
0308/Bh04	Կոմպլեքս անալիզ	7	24/12/0	5	Եզ. Գն. դաս.
0307/Bh05	Հանրահաշիվ-3	5	20/10/0	5	Եզ. Գն. դաս.
0309/Bh06	ԷՀՄ ճարտարապետություն և ասեմբլեր լեզու-3	4	8/8/0	5	Եզ. Գն. դաս.
0309/Bh10	Թարգմանության տեսություն	5	12/12/0	5	Եզ. Գն. դաս.
0308/Bh05	Ֆունկցիոնալ անալիզ	4	24/0/0	6	Եզ. Գն. դաս.
0308/Bh09	Թվային մեթոդներ-1	4	12/12/0	6	Առ. եզ. քնն.
0307/Bh09	Ալգորիթմների տեսություն	4	12/12/0	6	Եզ. Գն. դաս.
0309/Bh07	Տվյալների կառուցվածքներ	4	12/12/0	6	Եզ. Գն. դաս.
0309/Bh13	Կոմպյուտերային ցանցեր	2	12/0/0	6	Եզ. Գն. դաս.
0308/Bh06	Մոլորակոն դիֆերենցիալ հավասարումներ	7	24/12/0	7	Եզ. Գն. դաս.
0308/Bh10	Թվային մեթոդներ-2	6	24/12/0	7	Եզ. Գն. դաս.
0309/Bh08	Տվյալների հենքեր	4	12/12/0	7	Եզ. Գն. դաս.
0309/Bh12	Ծրագրավորման ֆունկցիոնալ համակարգեր	4	12/12/0	7	Եզ. Գն. դաս.
0308/Bh07	Մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ	8	24/24/0	8	Եզ. Գն. դաս.
0105/Bh01	Հավանականությունների տեսություն	5	12/12/0	8	Եզ. Գն. դաս.
0307/Bh10	Մաթեմատիկական տրամաբանություն	5	12/12/0	8	Եզ. Գն. դաս.
0408/Bh01	Ֆիզիկա-1	2	12/0/0	8	Առ. եզ. քնն.
0408/Bh02	Ֆիզիկա-2	4	12/12/0	9	Առ. եզ. քնն.
0307/Bh08	Գործողությունների հետազոտում	8	24/12/0	9	Եզ. Գն. դաս.
0309/Bh11	Օպերացիոն համակարգեր	4	12/12/0	9	Առ. եզ. քնն.
0307/Bh12	Կոմբինատոր ալգորիթմներ և վերլուծություն	4	24/0/0	9	Եզ. Գն. դաս.
0105/Bh02	Մաթեմատիկական վիճակագրություն	2	12/0/0	9	Առ. եզ. քնն.
0308/Bh08	Օպտիմիզացիայի մեթոդներ	4	12/12/0	10	Առ. ընթ. գնահատ.
0307/Bh13	Մաթեմատիկական կիրառական տարրեր	4	12/12/0	10	Առ. ընթ. գնահատ.

2.4. Կրթական այլ մոդուլներ

Կրթական ծրագրի այս բաժինն ընդգրկում է ամրագրված կրեդիտային արժեքով հետևյալ ոչ դասընթացային կրթական մոդուլները և ատեստավորման ձևերը.

Մոդուլ	Կրեդիտ	Կիսամյակ	Գնահատման ձևը
Կուրսային աշխատանք-1	2	7	Առ. ընթ. գնահատ.
Կուրսային աշխատանք-2	2	9	Առ. ընթ. գնահատ.
Պրակտիկա (արտադրական) 4 շաբաթ	4	8	ստուգարք
Անփոփիչ մասնագիտական քննություն	4	10	Առ. ընթ. գնահատ.
Ավարտական աշխատանք	12	10	Առ. ընթ. գնահատ.

Մաս II.

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1. Տեղեկագրքի նպատակը

Դասընթացների տեղեկագիրքը նախատեսված է **ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի** ֆակուլտետում հեռակա ուսուցմամբ իրականացվող բակալավրի կրթական ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես առանձին մասնագիտությունների ուսումնական ծրագրերի, այնպես էլ դրանց բաղադրիչ դասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է.

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված էլքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջները և ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին դասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ դասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, դասընթացին հատկացված կրեդիտները (ներառյալ շաբաթական լսարանային ժամաքանակներն ըստ պարապմունքի ձևերի), դասընթացի խնդիրները՝ արտահայտված էլքային կրթական արդյունքներով և սպասվող մասնագիտական և/կամ փոխանցելի կարողություններով, դասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

2. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ

2.1. Պարտադիր դասընթացներ

1401/Bh01. Հայոց լեզու և գրականություն – 1 (2 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ գործնական պարապմունք

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից հայերենի հնչյունական և բառային առանձնահատկությունները, ոճագիտական հիմնական հասկացությունները, նպաստել խոսքի թերությունների վերացմանը, ծանոթացնել հայ դասական գրականության նմուշներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կիրանա ժամանակակից հայոց լեզվի հնչյունական և բառային առանձնահատկությունները.
2. կտիրապետի իր մասնագիտական բառապաշարին, կկարողանա գրական հայերենով շարադրել մտքերը, գործնականում կկիրառի լեզվաոճական հնարները.
3. կծանոթանա հայ հեղինակների գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործություններին, կվերլուծի դրանք:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Պատմական համառոտ ակնարկ հայերենի զարգացման փուլերի մասին: Հայերենի տեղը աշխարհի լեզուների շարքում: *Թեմա 2՝* Հնչյունաբանություն. հայերենի հնչյունական համակարգը: *Թեմա 3՝* Շեշտ, վանկ, տողադարձ. հնչյունափոխություն: Հայերենի ուղղագրության սկզբունքները: *Թեմա 4՝* Բառագիտություն: *Թեմա 5՝* Բառապաշար. դասակարգման սկզբունքները. Մասնագիտական բառապաշար. տերմիններ: Հայերենի բառակազմական միջոցները: *Թեմա 6՝* Հայերենի գործառական ոճերը: Գրական երկերի վերլուծություն:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է նախօրոք տրվող ստուգարքային թելադրության դրական գնահատականի և եզրափակիչ բանավոր պատասխանի հիման վրա:

1401/Bh02. Հայոց լեզու և գրականություն – 2 (2 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ գործնական պարապմունք

2-րդ կիսամյակ, Առանց ընթացիկ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսուցանել ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական համակարգերը, ձևաբանական և շարահյուսական ոճագիտության հիմնական հասկացությունները, ծանոթացնել հայ դասական գրականության նմուշներին

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- 1 կիրմանա ժամանակակից հայերենի ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները.
- 2 կկարողանա ճիշտ գործածել քերականական ձևերը, գործնականում կկիրառի ձևաբանական և շարահյուսական լեզվաոճական հնարները. կկարողանա վարել երկխոսություն և բանավեճ.
- 3 կծանոթանա հայ հեղինակների գեղարվեստական մի շարք հայտնի ստեղծագործություններին, կվերլուծի դրանք:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ձևաբանություն. խոսքի մասերի դասակարգումը: **Թեմա 2**՝ Ժամանակակից հայերենի թեքվող խոսքի մասերը: **Թեմա 3**՝ Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը: **Թեմա 4**՝ Շարահյուսություն. կապակցման միջոցներ և եղանակներ: **Թեմա 5**՝ Պարզ նախադասություն: **Թեմա 6**՝ Բարդ նախադասություն. փոխակերպում և դերբայական դարձված: **Թեմա 7**՝ Ուղղակի և անուղղակի խոսք: **Թեմա 8**՝ Ժամանակակից հայերենի կետադրությունը: **Թեմա 9**՝ Ձևաբանական և շարահյուսական ոճաբանություն **Թեմա 10**՝ Ճարտասանական հմտություններ. բանավեճի արվեստ. երկխոսության վարում և կառավարում: Գրական երկերի վերլուծություն:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունն անցկացվում է բանավոր՝ նախաքննական թելադրության դրական արդյունքի դեպքում: Քննատմանը կազմված է չորս հարցից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5 միավոր: Առաջին երկու հարցերը հայոց լեզվին վերաբերող տեսական հարցեր են, երրորդը՝ հայ գրականությանը վերաբերող հարց, չորրորդը՝ գործնական առաջադրանք:

1704/Bh 01. Ռուսաց լեզու – 1 (4 կրեդիտ)

Շարաթական 6 ժամ գործնական պարապմունք,

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է՝

1. ապահովել ուսանողի ռուսաց լեզվի ընդհանուր համակարգին տիրապետելը,
2. ապահովել ուսանողի բանավոր խոսքի գրագետ կազմելու հմտությունը,
3. ապահովել ուսանողի երկխոսություն կազմելու հմտությունը՝ լեզվային տարբեր ոլորտներում հաղորդակցվելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի բարեհաջող ավարտին ուսանողը կկարողանա,

1. ձեռք բերել որոշակի հմտություններ ռուսաց լեզվի քերականական կառուցվածքի տիրապետելու ոլորտում,
2. գրագիտորեն կազմել իր բանավոր խոսքը,
3. մասնակցել տարաբնույթ երկխոսությունների,

4. ընթերցել, վերլուծել և վերարտադրել ճանաչողական և գեղարվեստական բնույթի տեքստեր:

Բովանդակությունը.

Թեմա 1. Հնչյունաբանություն. ձայնավոր և բաղաձյն հնչյունների ընդհանուր դասակարգումը; շեշտադրման և հնչերանգային հիմնական կանոնները: **Թեմա 2.** Բառագիտություն. Բառիմաստի ընդհանուր պատկերացում; բառային միավորների հարաբերակցությունը: **Թեմա 3.** Ձևաբանություն. Խոսքի մասերը և դրանց քերականական կարգերը: **Թեմա 4.** Շարահյուսություն. Հիմնական շարահյուսական միավորներ (բառակապակցություն և նախադասություն), պարզ նախադասություն; նախադասության տեսակները ըստ բնույթի և կառուցվածքի; նախադասության գլխավոր անդամները:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքը անց է կացվում բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում կատարված 2 ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

1704/Bh02. Ռուսաց լեզու –2 (4 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ գործնական պարապմունք

2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է՝

1. ապահովել ուսանողի բանավոր և գրավոր խոսքի կազմակերպման հմտությունները,
2. ապահովել ուսանողի մասնագիտական լեզվի տիրապետումը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի բարեհաջող ավարտին ուսանողը կկարողանա.

1. տիրապետել ռուսաց լեզվի ուղղագրության հիմնական կանոններին,
2. ձեռք բերել կայուն գիտելիքներ մասնագիտական լեզվի, տերմինաբանության ոլորտում,
3. կատարել մասնագիտական տեքստի շարահյուսական վերլուծություն՝ ելնելով այդ տեքստերին բնորոշ շարահյուսական կառույցների առանձնահատկություններից,
4. վերլուծել և վերարտադրել մասնագիտական տեքստը,
5. թարգմանել մասնագիտական տեքստը ռուսերենից հայերեն և հակառակը:

Բովանդակությունը.

Թեմա 1. Բառակազմություն. Բառարմատի, բառածանցների ընդհանուր պատկերացում; հիմնական բառակազմական միավորները: **Թեմա 2.** Ձևաբանություն. գոյականի, բայի, ածականի և մակբայի քերականական կարգերը; գոյականի սեռը; հոլովներ և հոլովում; բայի սեռը, ժամանակը, խոնարհումը: **Թեմա 3.** Շարահյուսություն. Միակազմ նախադասությունների դասակարգումը ըստ տեսակների; բարդ նախադասության ընդհանուր բնութագիրը և տեսակները: Բարդ համադասական նախադասություն: **Թեմա 4.** Մասնագիտական տեքստի կառուցվածքը. մասնագիտական տեքստի վերլուծություն;

տերմինների մեկնաբանում; բնորոշ շարահյուսական կառույցների առանձնացում; տեքստի թարգմանություն:

Ստուգարքի անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքը անց է կացվում բանավոր և հիմնված է կիսամյակի ընթացքում կատարված 2 ստուգողական աշխատանքների արդյունքների վրա:

1704/Bh03. Ռուսաց լեզու –3 (4 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ գործնական պարապմունք

3-րդ կիսամյակ, Առանց ընթացիկ գնահատման

Նպատակը.

Դասընթացի նպատակն է՝

1. զարգացնել ուսանողի լեզվային հմտությունները,
2. ապահովել ուսանողի մասնագիտական լեզվի լիարժեք տիրապետումը,
3. ապահովել ուսանողի ազատ օգտվելը մասնագիտական գրականության ուսական սկզբնաղբյուրներից:

Կրթական արդյունքները.

Դասընթացի բարեհաջող ավարտին ուսանողը կկարողանա.

1. ազատ տիրապետել մասնագիտական լեզվի, տվյալ մասնագիտության տերմինաբանական համակարգին,
2. տրամաբանորեն մեկնաբանել և վերարտադրել մասնագիտական տեքստը,
3. կազմել որակյալ զեկույցներ և ռեֆերատներ մասնագիտական թեմաներով,
4. ազատ թարգմանել տարբեր աստիճանի բարդության մասնագիտական տեքստեր:

Բովանդակությունը.

Թեմա 1. Դարձվածաբանություն. դարձվածքների ընդհանուր դասակարգում; մասնագիտական թեմաների շուրջ կազմված դարձվածքներ: **Թեմա 2.** Ոճաբանություն. Գիտական ոճի ձևավորումը և նրան բնորոշ շարահյուսական կառույցները; կապակցված գիտական տեկստի կառուցման միջոցները: **Թեմա 3.** Տերմինաբանություն. Գիտական տերմինների ծագումը և կառուցվածքը; միջազգային տերմիններ և դրանց համարժեքները: **Թեմա 4.** Թարգմանություն. գիտական տեքստի թարգմանության առանձնահատկությունները; տերմինների թարգմանության խնդիրը: **Թեմա 5.** Շարահյուսություն. բարդ ստորադասական նախադասության տեսակները: **Թեմա 6.** Գիտական զեկույցներ և ռեֆերատներ կազման ընդհանուր սկզբունքները և առանձնահատկությունները:

Քննության անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Քննությունը անց է կացվում բանավոր: Գնահատման առավելագույն չափանիշն է 20 միավոր: Հարցատումը բաղկացած է 3 հարցից, որոնց գնահատման չափանիշները համապատասխանաբար բաշխված են հետևյալ կերպ՝ 8, 8, 4 միավոր:

1602/Bh01. Անգլերեն լեզու -1 (4 կրեդիտ)

Շաբաթական 6 ժամ գործնական պարապմունք,

1-ին կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսուցանել մասնագիտական անգլերեն (professional English) ինչպես հումանիտար, այնպես էլ տեխնիկական և բնագիտական ֆակուլտետներում: Ուսուցումը բաժանվում է երկու փուլի՝ առաջին կիսամյակում ընդհանուր անգլերենի ուսուցում (general English), երկրորդում՝ մասնագիտական լեզվի ուսուցում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

1. կտիրապետի անգլերենի քերականության հիմունքներին և կձանոթանա հիմնական բառային ֆոնդին ,
2. ձեռք կբերի ընդհանուր անգլերենի գրավոր և բանավոր խոսքի հիմնական հմտություններ:

Բովանդակությունը.

